

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«ԷՏ Սուլար» ՍՊԸ

ՆԱԽԱԶԵՌՆՈՂ

«ԷՏ Սուլար» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ

« _____ » _____ 2021

ՀՀ Վայոց Ձորի մարզի Ազատեկի ֆոտովոլտային կայանի նախագծի
Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Վայք – 2021

Բովանդակություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	4
Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը, անվանումը և նպատակը, համառոտ բնութագիրը.....	4
Բացատրագիր	4
Նկարագիր	6
Ներտարածքային լուսավորության համակարգ.....	8
Տեսահսկման համակարգ	9
Պաշտպանական հողանցում	9
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	17
Միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ	19
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	19
Տեղամասի երկրաբանական բնութագիրը.....	19
Հիդրոերկրաբանական պայմանները.....	20
Ռելիեֆ.....	21
Տեկտոնիկա, սեյսմիկություն	21
Կլիմա.....	22
Մակերևութային ջրեր.....	31
Հողեր.....	32
Բուսական և կենդանական աշխարհ	34
Հայաստանի կենսաբազմազանությունը.....	34
Մոտեցում և մեթոդներ	34
Բուսական աշխարհ.....	36
Կենդանական աշխարհ.....	45
Ցամաքային անողնաշարավորներ	45
Կաթնասուններ.....	49

Սողուններ և երկենցաղներ	49
Թռչուններ	50
Ջրակենսաբանություն.....	53
Բնության հատուկ պահպանվող տարածքներ	53
Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր վնասակար ազդեցության բնութագրումը, դրանց բացառման, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր.....	58
Պատմամշակութային հուշարձաններ	59
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱԿԱՐԳԻՐԸ	65
Բնապահպանական կառավարման պլան	70
Բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլան	76
Բնակչության սոցիալական պայմանների բարելավման դրույթներ	78
Բնակչության կենսամակարդակի բարելավման դրույթներ	78
Մշտադիտարկումների պլան	78
Թափոնների կառավարում.....	79
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	81
Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը շինարարական աշխատանքների ընթացքում:.....	83
Էլեկտրակայանքների անվտանգ շահագործման կանոնները համաձայն 2006 թվականի նոյեմբերի 23-ի, N 1933-Ն «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգ.....	91
Օգտագործված գրականության ցանկ	94

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը, անվանումը և նպատակը, համառոտ բնութագիրը

«ԷՏ Սոլար» ՍՊԸ-ն նախատեսում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Ագատեկ համայնքում իրականացնել արևային կայանի նախագծման, կառուցման և շահագործման աշխատանքներ: Ընկերությունը տեղակայված ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքում: Ընկերության իրավաբանական տեղակայումը գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզ ք. Վայքում, Ջերմուկի խճուղ. 14 շ. 48 բն.: Ընկերությունը նախատեսվող գործունեությունը իրականացնում է միաժամանակ «ԷԴՍ Սոլար» ՍՊԸ-ի հետ համատեղության կարգով: Արևային կայանի տարածքը և օդային գիծը սեփականության իրավունքով պատկանում են նշյալ ընկերություններին, որոնց գործունեությունը և կանխատեսվող ազդեցությունը գործնականում նույնն են: Մյուս կազմակերպությունն էլ նախատեսվող գործունեության մաս հանդիսանալով դիմել է ևօրենքով սահմանված կարգով անցնում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննություն:

Բացատրագիր

Բացատրագիր

Այս նախագիծը կատարված է ըստ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիայի ԼԷ №0664:

Մույն կայանը տեղակայված է ստորև նշված հասցեով, կադաստրային ծածկագիր 10-0005-0112-0102,

1. Ընդհանուր մաս

Մույն լրակագմը կազմվել է հիմք ընդունելով՝

- ճարտարապետաշինարարական լուծումները,
- պատվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական բնութագրերը,
- ընկերության հարակից բաժինների առաջադրանքները:

Այն համապատասխանում է ՀՀ գործող շինարարական նորմերին: Այն ներառում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի Ազատեկ գյուղի 33-րդ փողոցի 1/1 հողամասում կառուցվող 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղաբաշխման, կրող կոնստրուկցիաների և ֆոտովոլտային մոդուլների դասավորության, հաստատուն և փոփոխական հոսանքի էլեկտրական համակարգերի, մալուխային խրամուղիների, ենթակայանի, 0.8կՎ և 35կՎ բաշխիչ սարքավորումների, հաշվառման և մոնիթորինգի, անվտանգության և արտաքին լուսավորության համակարգերի, 0.4կՎ սեփական կարիքների, հողանցման համակարգի, 0.8կՎ մալուխների և կայանի տարածքում 35կՎ սարքավորումների մոնտաժման, տեղաբաշխման և ընդհանուր էլեկտրական ցանցին միացման սխեմաները:

Նախագծերը կատարված են հիմք ընդունելով «Շինարարական նորմերի և կանոնների» պահանջները (СНИП) 3.05.06-85 գործող «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջների» տեխնիկական կանոնակարգի 6-րդ և 7-րդ բաժինները՝ ներառյալ փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև ՀՀ ստանդարտ ՀՍՏ 335-2011 «Արևային լուսաէլեկտրական կայանքների (մինչև 5ՄՎտ), միացումը էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցին» ընդհանուր դրույթները:

Ըստ նախագծի նախանական տարբերակի նախատեսվող արևային կայանի էլակտրագիծը ունենալու է շուրջ 25 հենասյուն: Ավարտական նախագծում ավելի հստակ արտացոլված կլինի հենասյուների քանակն ու տեղադիրքը:

Նկարագիր

Նախատեսվում է կառուցել 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլային կայան հետևյալ աշխարհագրական կոորդինատներով՝ հս. լայն. 39°39'50.85"N և արլ. երկայն. 45°26'40.05"E, ծովի մակերևույթից 1585մ բարձրության վրա:

Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 10764 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 535Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 20 հատ 250կՎտ էլքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին:

Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 20° թեքվածությամբ, գետնից առնվազն 100սմ բարձրության վրա (ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը ձմռան ընթացքում կազմում է

41սմ): Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության դեպքում:

250կՎտ հզորությամբ փոխակերպիչները ունեն 20-ական հաստատուն հոսանքի մուտք, որին միացվում են 20 հատ զուգահեռ շղթաներ (String)՝ 26 հատ հաջորդաբար միացված ֆոտովոլտային պանելներով: Ֆոտովոլտային պանելների շղթաները միմյանց միացվում են պանելների մուտքին 4մ² (EU)/12AWG(US), L=1200մմ և PV1-F1x4մ² մալուխներով: Մոդուլների և փոխակերպիչների համար նախատեսված են MC4 տիպի կոնեկտորներ:

Շղթաների զուգահեռ միացումներն ապահովված է փոխակերպիչներում, յուրաքանչյուր

20 շղթայի համար նախատեսված է առանձին փոխակերպիչ: Ընտրվել են JA SOLAR ֆիրմային արտադրության 20.6% ՕԳԳ-ով, IP 68 տիպի, 535Վտ առավելագույն

հզորությամբ բազմաբյուրեղ JAM72D30-535MB մոդելի ֆոտովոլտային մոդուլներ՝ ընդհանուր 10400 հատ: Փոխակերպիչները SOLIS արտադրության, մոդելը SOLIS-250K-EHV-5G՝ 250կՎտ էլքային հզորության, ցանցային տեսակի, 14 MPPT (Maximal Power Point Tracker) 28 մուտքերով:

Փոխակերպիչը ունեի համացանցին միանալու և տվյալները փոխանցելու հնարավորություն, նրանում ներկառուցված են DC և AC իմպուլսային գերլարրումների պաշտպանիչ սարքեր (SPD):

Ginlong Solis home ինտերֆեյսի միջոցով նախատեսվում է տվյալների հավաքագրումը և արտապատկերումը, ինչպես նաև մշտական մոնիթորինգ: Ֆոտոէլեկտրական կայանի զբաղեցրած մակերեսը՝ 9.11 հա է, մեկ մոդուլի չափսերը՝ 2285x1134x35մմ:

Յուրաքանչյուր փոխակերպիչից դեպի ՏԵ-ի ցածր լարման վահաններին էլեկտրամատակարարումը իրականացվում է ստորգետնյա, զրահապատ , այլումենե AB56ՍՑ տիպի 3x95մմ² հատույթով մալուղագծով: Լարման անկումը հաշվարկված է մինչև 4%: Մալուխները կարճ միացման և գերբեռնվածության հոսանքներից պաշտպանվում են մուտքային եռաֆազ CM3-225 տիպի ավտոմատ անջատիչներով: Բաց տարածքում տեղակայվող ավտոմատ անջատիչները IP 65 տիպի են:

Արևահին ֆոտովոլտային կայանի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի, ներքին ցանցից դուրս, հաշվառման համար անհրաժեշտ է սահմանազատման տեղում էլ. հաշվիչը փոխարինել երկկողմանի բազմասակագնային էլ. հաշվիչով:

Արեվային ֆոտովոլտային կայանը 35կվ ցանցին միանում է 6300կՎԱ/35/0,8կվ տրանսֆորմատորի միջոցով, օգտագործվում է նաև 25կՎԱ/0.8/0,4կվ լարման տրանսֆորմատոր՝ սեփական կարիքների համար:

Ներտարածքային լուսավորության համակարգ

Սույն նախագծում ներառված են լուսավորության հենարանների տեղաբաշխումը, սնող մալուխագծերի անցկացումը, լուսավորության ավտոմատ ղեկավարման արկղի մենտաժումը և սնուցումը 25կՎԱ/0.8/0,4կվ ՏԵ-ի 0,4կվ լարման վահանից:

Լուսավորության հաշվարկը իրականացվել է Dialux համակարգչային ծրագրով՝ 3d մոդելավորմամբ, համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 նորմերի: Հաշվաիկի միջոցով ընտրվել է լուսավորության հենարանների բարձրությունը, միջհենարանային հեռավորությունը, լուսարձակների հզորությունը և թեքման անկյունը:

Dialux ծրագրով հաշվարկում օգտագործվել է 30լմ/վտ արդյունավետությամբ լուսարձակ: Լուսավորության ցնցը կառուցվում է 4,5մ բարձրության մետաղական բարձակներով հենարաններով (բարձրությունը սահմանափակված է հաշվի առնելով ստվերների

առկայությունը ֆոտովոլտային վահանակների վրա):

Լուսատուի տեխնիկական բնութագրերն են

- LED լուսատուներ՝ 30 Վտ հզորությամբ,
- Գունային ջերմաստիճան 4000Կ,
- Գունափոխանցման գործակից >80 (CRI)
- Հոսանքի լարման աշխատանքային տիրույթը՝ 220-240վ,
- Աշխատանքային ջերմաստիճան՝ -40 - +50C,
- Արտաքին մթնոլորտային ազդեցությունից պաշտպանվածություն՝ IP65,
- Մեխանիկական ազդեցությունից պաշտպանվածություն՝ IK06 [1 J]
- Արդյունավետությունը >85 լմ/Վտ,
- Թողարկման հոսանքը՝ 1.11Ա,
- Հզորության գործակիցը՝ 0.9:

Սնող մալուխները անցկացվում են ստորգետնյա եղանակով:

Լուսավորությունը կառավարվում է լուսավորության ղեկավարման արկղից (ԼՂԱ): ԼՂԱ-ն տեղադրվում է տ/ե-ի պատին:

ԼՂԱ-ն ունի ավտոմատ և ձեռքի կառավարման ռեժիմներ:

Ավտոմատ կառավարումը իրականացվում է ըստ բնական լուսավորվածության աստիճանից: Կայանի տարածքում աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված են էլ.

16Ա,220Վ վարդակներ մետաղական արկղում:

Տեսահսկման համակարգ

Տեսահսկման համակարգը ապահովում է պահպանվող տարածքի շուրջօրյա տեսահսկում, ինֆորմացիայի գրանցում և արտացոլում պահակատան համակարգչի մոնիտորի էկրանին: Տարածքի տեսահսկման համակարգը բաղկացած է հասցեավոր տեսախցիկներից, ինֆորմացիոն ստորգետնյա մալուխներից, ցանցային կոմուտատորներից:

Ինֆորմացիոն և տեսահսկման բոլոր մալուխները անցկացվում են պոլիէթիլենային խողովակներով:

Պաշտպանական հողանցում

Ֆոտովոլտային կայանի հողանցումն իրականացնել համաձայն СНП 3.05.06-96:

Հողի մակերևույթին 0.9մ խորության վրա հավաքվում է հողանցման սարքվածքը (կոնտուրը),որը բաղկացած է.

- հողանցման հորիզոնական հաղորդիչից (40x4 շերտապողպատ),
- հողանցման հաղորդաձող (50x50x5, L=2մ անկյունակ),
- հողանցման հաղորդալարերից:

Հողանցման սարքվածքը իրականացվել է տեսական հաշվարկի հիման վրա: Հողանցման դիմադրությունը տարվա ցանկացած եղանակի չպետք է գերազանցի 40հմ: Լաբորատոր չափումներից հետո, եթե այն մեծ է նորմավորված դիմադրությունից անհրաժեշտ է խփել լրացուցիչ էլեկտրոդներ:

Պաշտպանական հողանցումը իրականացվում է հողանցման հաղորդալարերով: Այդ նպատակով ֆոտովոլտային պանելների այլումինե իրանը հողանցման հաղորդալարով միացվում է հողանցման համակարգին: Բոլոր մետաղական ոչհոսանքատար սարքավորումները պետք է հողանցվեն:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համաձայն՝

- ПУЭ(Правила устройства электроустановка - издание 2007г.)
- СНП3,05,06-85(Монтаж электрических устройства)
- СН 102-76*(Инструкция по устройству сети заземления в электроустановках):

Տարածքը պետք է ապահովվել սպասարկման համար անհրաժեշտ արահետներով, ջրամատակարարման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման համակարգերով:

Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներ: Կայանի տարածքը ցանկապատված է 2մ բարձրությամբ մետաղացանցով: Տարածքի հիմնական մուտքը հյուսիսային կողմից է: Նախագծում կիրառված բոլոր նյութերը ենթակա են փոփոխության համաձայն տեխնիկական պահանջների, եթե անյ չի բերում համակարգի տեխնիկական տվյալների վատթարացման:

Ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների նյութատեխնիկական հիմնական մատակարարումը լինելու է ք. Երևանից: Կառուցման աշխատանքների ժամանակ նախատեսվող հիմնական աշխատանքները կազմված են հողի հարթեցման, տոփանման աշխատանքներից, որից հետո բետոնային ամրացումով կտեղադրվի ֆոտովոլտային պանելի հիմքը և կտեղադրվի պանելը: Հիմնական նյութատեխնիկական ծախսը իրականացվելու նշյալ աշխատանքների կատարման համար:

Վայք համայնքից մատակարարվելու է աշխատակիցների խմելու և կենցաղային պահանջների համար նախատեսված ջրաքանակը, որը փոքր ծավալով է լինելու: Վայքից ջրի բաքով տեղափոխվելու է գործունեության տարածք:

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվող նյութատեխնիկական բազան բերված է ստորև՝

Անվանում
Քառանկյուն խողովակ 40*40*1.5
Քառանկյուն խողովակ 30*50*1.5
Եռակցման էլեկտրոդ

Պոլիէթիլենային թաղանթ
Լուծիչ 3լ
Ցեմենտ
սև թերթ տ/գ 4,0*1250*2500
Կտրող սկավառակ 230
Կտրող սկավառակ, 115*1,2*22մմ
խողովակ զսպանակով 2 դ
Տախտակ
մեխ
մետաղալար 1,5մմ
կտրող սկավառակ 125*7
մալուխ կլոր 2*1.5 in-vi
Խիճ ավազակոպճային խառնուրդի
Խամուտ 32-31
Քար Klingspor A 60 115x1x22.23 ALYUMIN 22534
Չեղյուս, պնդողակ, տափօղակ
Պտուտակ տանիքի
Սև մետ. թիթեղ՝ ձևավոր 1000*2000*1.0
Ներկ աերոզոլային
Քար արծիվ 1,9 230x1,9x22 կարմիր
պտուտակ 4.2*25
թել շինարարական 120գ
խողովակ d=273մմ
Չեղյուս մանեկ տափօղակ
Ներկ ալկիդային 2.6կգ
լուծիչ
Չաղորդալար 2*2.5
Չաղորդալար պղնձե 2*4
Սոսինձ ՄԴՖ 400ml
Քար A46 TZ 230*1.9*22.23
խողովակ ճնշման B20
Ուղղ. մետ. խողովակ 20*30*2.0

Մալուխ գողման 1*25
Մալուխի ծայրակալ
Խամուտ 16-25
Անկյունակ պողպատյա 63*63*5
Մետաղաճրպան 10մմ
Մետաղաճրպան 6մմ
ավազ
Պրոֆիլ Ս-21
Խամուտ մետաղական 020-022
Խամուտ մետաղական 017-019
Խողովակ 400 մմ
Սփրեյ ունիվերսալ 425մլ Prestij
Հաղորդալար 2*0.75
Պակլի
Փչովի յուղաներկ
պարան
Ուղղ. մետ. խողովակ 100*100*2.0
Ամրան Φ 8 մմ
Թեքում /отвод/ 110*87 ВК
Սոսինձ Երկկոմ.ունիվ., 250մլ+50գր
Մալուխ 1*16
Լատունե կց. խող. 12x1/2
Պտուտակ 4.8x100
Շտիր 2*16
ՊԷԹ խող. 75 մմ PN6
ռետ. խողովակ շին
Պոլիէթիլ. երկշերտ խողովակ SN8 250մմ
Էլեկտրոդ. УОНИИ 13/55 д.3/ 5 կգ
Քառանկյուն խողովակ 30*30*1.2
Մալուխ 2*4
Ձկան թել
Կցամաս խողովակի

Խողովակ /ռետինե/ D=25
Խողովակ 10մմ
Շվեյլեր հեծան
Քառանկյուն խողովակ 30*40*2
Ռեզինե պարան կռուչոկով 080

Նախատեսվող գործունեության իրականացման համար ներգրավված տեխնիկական միջոցների անվանացանկը ներկայացված է ստորև՝


Անվանում
SHACMAN SX3255DR384
SHAANXI SX3254JM384
Կամազ 6520
Ուրալ 63685-0110
Կամազ KO-505A 532150
Թրթուրավոր Էքսկավատոր CAT 345BACCC01014
ա/մ ԿԱՄԱՉ 5320
Թրթուրավոր Էքսկավատոր Komatsu PC400-7
Գազ 66
UAZ 31519
Բուլդոզեր Komatsu D65EX-16 N82650

Komatsu WB93R-5E0 № F64803, Էքսկավատոր -ամբարձիչ backhoe Loader

KAMAZ SB-92V1 (Kamaz-5511) Բեռնախանիչ

Uaz 23632 Pickup 905 AV 61

Komatsu PC 200



Միևնա 1. Արևային կայանի և օդային գծի տեղակայումը



Նկար 1. Վայոց Ձորի մարզի տարածքային քարտեզ

Նախագծման նորմատիվ-իրավական հենքը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:
- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը:
- Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրիք (2010թ.)
- Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրիք (2010թ.)
- ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանող որոշում (2014թ.)
- ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 781-Ն որոշումը (2014 թ.)

Միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա
- (CITES) (Վաշինգտոն)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-Շանեյրո)

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Տեղամասի երկրաբանական բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը տեղակայված է Արփիի սինկլինորիումի կենտրոնական մասում, որը կազմված է հիմնականում միջին էոցենի հասակի

հրաբխանստվածքային հաստվածքից՝ պատռված Կայալուի ինտրուզիայի գրանիտոիդներով: Գորշունեության իրականացման տեղամասում միջին էոցենի հասակի հրաբխանստվածքային առաջացումներն ունեն համեմատաբար սահմանափակ տարածում:

Համեմատաբար քիչ տարածված են դիորիտների և դիաբազ-պորֆիրիտների դայկաները և դայկանման մարմինները, հյուսիս-արևելյան ծայրամասում զարգացած են պլիոցենի անդեզիտադաշիտները:

Կայալուի ինտրուզիվը տեղակայված է Արփա գետի աջ ափին, գործունեության տարածքի անմիջական հարևանությամբ: Ինտրուզիվի հյուսիսային և արևելյան մասերը ներկայացված են քվարցային սիենիտներով և սիենիտ-մոնցոնիտներով, իսկ արևմտյան և հարավայինը՝ քվարցային դիորիտներով և դիորիտներով: Ինտրուզիվ զանգվածի և ներփակող ապարների խպակում ձևավորվել են ուժգին փոփոխված կոնտակտային առաջացումներ՝ ներկայացված տարրական եղջրախաբերով:

Տեղամասին որոշ հատվածները ծածկված են չորրորդական այլուվիալ-դելյուվիալ առաջացումներով, որոնք լայն տարածված են Արփա գետի հունի և վտակների երկայնքով՝ սովորաբար 10-20մ հզորությամբ, առանձին տեղամասերում, գետահունի մոտակայքում, դրանք հասնում են 20-30մ և նույնիսկ 50-70մ:

Հիդրոերկրաբանական պայմանները

Նախատեսվող գործունեության տարածքում ջրերի սնուցումն իրականացվում է Վայքի լեռնաշղթայի հյուսիսային լեռնաբազուկներից, որի սահմաններում ռեգիոնալ և տեղական արտահոսքի գոտիները համընկնում են, իսկ էրոզիայի բազիս է հանդիսանում Արփա գետի կիրճը: Ուղղաձիգ կտրվածքում այստեղ առանձնացվում են տեղական արտահոսքի գոտին, որը բաղկացած է աերացիայի և բնահողային-ճեղքային ջրերի ենթագոտիներից, և ռեգիոնալ արտահոսքի գոտին, որը բաղկացած է միայն շերտային ջրերի ենթագոտուց:

Աերացիայի ենթագոտու ջրերն ի հայտ են գալիս տեղումներից հետո և հիմնականում չորանում 3-4 օր հետո: Ելքերի դեբիտը, որպես կանոն, մինչև 0.1լ/վրկ է: Տեղամասի սահմաններում գերակշռող են գրունտա-ճեղքային ջրերի աղբյուրները: Դրանց դեբիտներն ունեն կայուն բնույթ և տատանվում են 0.1-1.0 լ/վրկ սահմաններում: Ռեգիոնալ արտահոսքի ջրերը ներկայացված են մի քանի էլքերով, որոնք հիմնականում գտնվում են Արփա գետի ջրագծում: Ջրերի դեբիտը, ջերմաստիճանը և քիմիական կազմը կայուն են ամբողջ տարվա ընթացքում:


Ռեչիեֆ

Նախատեսվող գործունեության շրջանը բնութագրվում է լեռնային կտրտված ռեչիեֆով: Լեռնագրական տեսակետից տարածքը տեղակայված է Վայքի գոգահովտում, որը բոլոր կողմերից եզրագծվում է Վայքի, Զանգեզուրի, Թեքսարի, Վարդենիսի լեռնաշղթաներով: Շրջանի բարձրունքային նիշերը աչափնյա տեղամասում տատանվում են 1570-1440մ սահմաններում, ձախափնյա տեղամասում՝ 1440-1320մ:

Տարածքը գտնվում է ցածրալեռնային գոտու վերին սահմանում, որը ձգվում է Արփա գետի հովտի երկայնքով և իրենից ներկայացնում է անտեցեղենտ կիրճ, մերկ գառիթափ լանջերով և տաշտաձև հատակով: Բացարձակ ջերմաստիճանների մեծ տատանումները պայմանավորում են հողմահարման և դեռուդացման պրոցեսների ինտենսիվությամբ: Բնորոշ են լերկուտները: Նախատեսվող գործունեության տարածքը հիմնականում լավ մերկացված է, սակայն շրջակայքում առկա են առանձին տեղամասեր, որոնք ծածկված են գաճաճ անտառով և թփուտներով:

Տեկտոնիկա, սեյսմիկություն

Նախատեսվող գործունեության տարածքից ավելի քան 4 կմ (ուղիղ գծով) հեռավորության վրա է գտնվում Արփա գետի հունի երկայնքով անցնող մերձլայնակի տեկտոնական խոշոր խախտում: Տեկտոնական խաղտումը հանդիսանում է Արփա գետի կիրճը, որը հայտնի է Արփայի կիրճ անունով: Տարածքում առանձնացնում են նաև մի քանի տեկտոնական խախտումներ, հիմնականում հյուսիս-արևելյան-մերձլայնակի և հյուսիս-արևմտյան-մերձմիջօրեական տարածմամբ: Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն 2005) նախատեսվող գործունեության տարածքին մոտ սողանքային գոտիները ներկայացված է ստորև:



Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն 2005)

Կլիմա

Տարածքի կլիմայական բնութագիրը ներկայացնելու համար օգտագործվել են տարածաշրջանում գործող Վայք օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալները:

Օդի և հողի ջերմաստիճան

Օդի ջերմաստիճանը (°C)

Աղյուսակ 1.1

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
միջին ամսական	-6.3	-4.0	0.5	8.5	12.5	17.9	22.0	21.9	17.0	9.9	3.1	-3.3	8.3
միջին առավելագույն	0.9	2.9	9.2	14.9	19.8	25.0	30.0	29.2	26.1	18.0	9.7	2.9	15.7
միջին նվազագույն	-9.9	-7.7	-1.9	4.0	8.5	11.8	15.3	15.1	11.2	4.9	-0.2	-6.4	3.7
բացարձակ առավելագույն	15	18	24	29	34	37	39	39	37	28	20	12	39
բացարձակ նվազագույն	-21	-18	-12	-8	1	6	10	8	3	-2	-13	-21	-21

Օդի միջին օրական ջերմաստիճանի որոշակի սահմաններով անցման ժամկետները, տևողությունը և միջին ջերմաստիճանը, (°C)

Աղյուսակ 1.2

Բնութագիր	Բարձր									
	0°		5°		10°		15°		20°	
Անցման ժամկետները	02 III	05 XII	25 III	10 XI	19 IV	13 X	22 V	1 X	25 VI	02 IX

Տևողությունը (օր)	279	231	178	133	70
-------------------	-----	-----	-----	-----	----

Ջերմության ժամանակաշրջանի ($\leq 80C$) բնութագրերը

Աղյուսակ 1.3

Սկիզբ	Վերջ	Տևողություն (օր)	Ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանը ($^{\circ}C$)
20 X	15 IV	178	0,1

Հողի մակերևույթի ջերմաստիճանը ($^{\circ}C$)

Աղյուսակ 1.4

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
միջին ամսական	-7	-3	5	12	19	24	30	28	22	12	3	-3	12
միջին առավելագույն	3	8	23	32	40	50	56	51	43	30	15	5	30
միջին նվազագույն	-14	-10	-5	1	5	10	13	13	7	2	-4	-6	1
բացարձակ առավելագույն	22	27	40	55	56	64	69	70	59	48	30	16	70
բացարձակ նվազագույն	-33	-21	-15	-6	-1	5	7	6	0	-1	-13	-25	-33

Օդի խոնավություն

Օդի խոնավությունը

Աղյուսակ 1.5

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
Ջրային գոլորշու առաձգականությունը (հՊա)	3.5	3.9	5.5	7.8	9.8	12.8	15.1	15.2	11.3	8.7	6.4	4.9	8.7
Հարաբերական (%)	77	74	66	63	61	59	52	55	54	64	72	78	65
Պակասորդը (հՊա)	1.2	1.6	3.2	5.9	7.8	11	16.4	14.8	12	6.1	2.9	1.5	7

Տեղումների քանակը և ձնածածկույթը

Մթնոլորտային տեղումների քանակը, մմ

Աղյուսակ 1.6

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
Պինդ	26	20	12								5	23	86
Հեղուկ	1	6	19	58	68	50	28	26	20	41	25	10	352
Խառը	3	7	10	4							6	3	33
Ընդհանուր	30	33	41	62	68	50	28	26	20	41	36	36	471
Օրական առավելագույնը	23	22	24	37	32	34	35	41	25	31	38	29	41

Տարբեր քանակի տեղումներով օրերի թիվը

Աղյուսակ 1.7

Տեղումների քանակը(մմ)	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տար ի
≥0.1	7.2	6.5	9.0	11.6	12.2	7.8	4.1	3.7	3.3	6.6	5.9	7.1	85
≥0.5	6.5	6.1	8.7	11.0	11.5	7.2	3.9	3.3	3.2	6.2	5.4	6.6	80
≥1.0	5.4	5.1	7.6	10.7	10.4	6.3	3.3	3.0	2.5	5.3	4.3	5.8	70
≥5.0	1.6	1.8	2.5	4.0	4.5	2.8	1.5	1.5	1.3	2.6	1.6	1.9	28
≥10.0	0.5	0.7	0.8	1.8	1.7	1.2	0.6	0.7	0.6	1.2	0.8	0.8	11
≥20.0	0.1	0.04	0.1	0.1	0.2	0.3	0.2	0.2	0.04	0.3	0.2	0.04	2
≥30.0				0.04	0.04	0.04	0.1	0.04			0.04		0.3

Ձնածածկույթի առաջացման և վերացման ժամկետները

Աղյուսակ 1.8

Ձնածածկույթով օրերի թիվը	Ձնածածկույթի առաջացման ժամկետները			Ձնածածկույթի վերացման ժամկետները			Առանց կայուն ձնածածկույթի
	միջին	ամենավաղ	ամենատուշ	միջին	ամենավաղ	ամենատուշ	ձմեռների կրկնելիությունը, (%)
57	29 XI	3 XI	24 XII	21 III	9 II	21 IV	60

Ձնածածկույթի միջին տասնօրյակային բարձրությունը (սմ)

ըստ մշտական ձողաքանոնի

Աղյուսակ 1.9

XI			XII			I			II			III			IV	
1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2
●	●	3	6	7	8	9	10	12	10	9	8	6	3	●	●	●

Կետը (●) նշանակում է, որ տվյալ տասնորյակում ձնածածկույթ դիտվել է ավելի քիչ, քան ձմեռների 50%-ում, այդ պատճառով միջին բարձրությունը չի հաշվարկվել:

Ձնածածկույթի առավելագույն տասնորյակային բարձրությունը (սմ) ձմռան ընթացքում

Աղյուսակ 1.10

Միջին	Առավելագույն	Նվազագույն
23	75	7

Մթնոլորտային ճնշում

Մթնոլորտային ճնշում (հՊա)

Աղյուսակ 1.11

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
Միջին	83 5	83 3.8	83 3.2	833	83 4.5	833. 8	832. 9	833. 9	836. 4	838. 3	837. 9	835. 9	83 4.9
Բացարձակ	84 9.1	84 7.9	84 7.5	845. 3	84 6	842. 8	840. 6	843. 3	845. 7	847. 2	849. 5	848. 7	84 9.5

առավելագույն													
Բացարձակ նվազագույն	81 6.4	81 5.4	81 6.4	818. 3	81 8	824	824. 7	824. 9	827. 6	824. 7	821	818	81 5.4

Քամի

Քամու ուղղությունների և անդորրի կրկնելիությունը (%)

Աղյուսակ 1.12

Ամիս	Հս	Հս Արլ	Արլ	Հվ Արլ	Հվ	Հվ Արմ	Արմ	Հս Արմ	Անդորր
I	2	2	19	21	20	11	17	8	55
II	2	1	20	19	22	11	18	7	41
III	2	3	25	19	18	11	15	7	27
IV	3	3	24	18	16	10	18	8	31
V	3	3	20	18	17	10	21	8	28
VI	3	6	22	16	16	10	20	7	27
VII	2	9	27	18	15	8	15	6	36
VIII	2	7	25	17	16	10	17	6	34
IX	1	4	21	17	17	12	20	8	50
X	2	4	22	16	19	10	21	6	60
XI	2	2	21	20	19	10	19	7	61
XII	3	3	24	27	18	8	12	5	62
Տարի	2	4	23	19	17	10	18	7	43

Քամու արագությունը (մ/վրկ)

Աղյուսակ 1.13

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
միջին ամսական	0.8	1.0	1.4	1.2	1.3	1.2	1.3	1.3	0.8	0.9	0.6	0.8	1.0
առավելագույն	7	6	19	10	9	11	9	7	10	9	7	10	19
պոռթկումը	13	14	23	19	22	21	14	15	15	14	15	17	23

Ճառագայթային ռեժիմ և լուսային ռեժիմ

Արևափայլ

Աղյուսակ 1.14

Բնութագրեր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
Տևողությունը (ժ)	134	135	154	158	220	290	330	306	269	218	169	132	2515
Առանց արևի օրերի թիվը	7	6	5	4	1	0.2	0	0.2	0.4	2	4	6	36

Ամպամածություն և մթնոլորտային երևույթներ

Միջին ամսական և տարեկան ընդհանուր և ստորին ամպամածությունը (բալեր)

Աղյուսակ 1.15

Ամպամածություն	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
Ընդհանուր	5.7	5.3	5.5	6.1	5.2	4.2	2.2	2.3	1.8	3.8	5.5	6.5	4.5
Ստորին	4.8	4.5	4.4	4.8	4.2	3.2	1.9	1.8	1.4	3.1	4.7	5.5	3.7

Կլիմայական տվյալների ամփոփում

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 8.3°C է, հունվարինը՝ -6.3°C, ապրիլինը՝ 8.5°C, հուլիսինը՝ 22.0 °C, հոկտեմբերինը՝ 9.9°C:

Ջերմաստիճանի տարեկան ամպլիտուդան 28.3°C է:

Բացարձակ նվազագույնը -21°C է և դիտվել է հունվարին, բացարձակ առավելագույնը՝ 39°C է և դիտվել է հուլիսին:

Օդի միջին օրական ջերմաստիճանների անցման ամսաթվերը որոշակի սահմաններից և օրերի քանակը այդ սահմաններում բերված են աղյուսակ 1.2-ում:

Հողի մակերևութի վրա միջին տարեկան ջերմաստիճանը 12°C է, հունվարին՝

-7°C, իսկ հուլիսին՝ 30°C:


Օդի միջին տարեկան ճնշումը 834.9 մբ է, բացարձակ խոնավությունը 8.7 մբ է, իսկ հարաբերականը՝ 65 %:

Տարվա ընթացքում թափվում են 471 մմ տեղումներ: Տեղումների առավելագույնը դիտվում է մայիսին՝ 68 մմ, իսկ նվազագույնը օգոստոսին՝ 26 մմ:

Ձյան տեսքով թափվող տեղումների քանակությունը 86 մմ է: Նոյեմբերի 29-ից հաստատվում է կայուն ձնածածկ, որը վերանում է մարտի 21-ին: Ձյան ծածկույթի առավելագույն շերտի բարձրությունը 75 սմ է, նվազագույնը՝ 7 սմ:

Տարվա ընթացքում գերակշռում են արևելյան ուղղությամբ փչող քամիները: Քամու ուղղությունը և անդորրի կրկնելիությունը ըստ ամիսների բերված են աղյուսակում: Քամու միջին արագությունը տարվա ընթացքում 1.0 մ/վ է: Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ) օրերի միջին թիվը կազմում է 7 օր:

Տարեկան գոլորշիացումը կազմում է 380մմ, իսկ գոլորշունակությունը՝ 900մմ:



Նկար 2. ՀՀ կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Մակերևութային ջրեր

Տարածքի հիմնական ջրահոսքը Արփա գետն է, որը սկիզբ է առնում Վարդենիսի լեռնաշղթայի լանջերից, Ջերմուկ քաղաքից դեպի հյուսիս այն ընդունում է ձախ վտակի ջրերը, որը սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերից: Գետի ընդհանուր երկարությունը 96 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 2080կմ²: Արփա գետը փաստորեն ձևավորվում է տվյալ վտակի հետ միանալուց հետո: Արփա գետը հոսում է նեղ և խոր ձորերով, սակայն Վայք-Եղեգնաձոր հատվածում գետի ողողահունը լայնանում է, գետի կիրճի հատակը դառնում է տաշտաձև: Արփա գետի սնուցումը խառն է՝ անձրևային, հալոցքային և գրունտային ջրերի հաշվին: Գերակշռում է գրունտային սնումը (43-45%):

Համաձայն ք.Վայք հիդրոլոգիական դիտակետի բազմատարյա դիտումների Արփա գետի միջին տարեկան հոսքը Վայք քաղաքի տարածքում կազմում է 7.92մ³/վ, հոսքի մոդուլը՝ 8.48 լ/վ կմ², հոսքի շերտը կազմում է 268մմ, ծավալը՝ 250 մլն.մ³: Արփա-Վայք դիտակետի տվյալներով գետի բացարձակ առավելագույն ելքն անցել է 1969թ. ապրիլի 23-ին՝ 177 մ³/վ, իսկ նվազագույնը դիտվել է 1981թ. հուլիսի 27-ին՝ 0.60 մ³/վ: Նվազագույն ելքը 95% ապահովվածության տարվա համար կազմում է 0.82 մ³/վ:

Գետի հունի միջին լայնությունը Վայք քաղաքի մոտ կազմում է 13.2 մ, միջին խորությունը՝ 0.76մ, հոսանքի միջին արագությունը՝ 1.13 մ/վ:

Արփա գետի ջրերը Վայք քաղաքի մոտ ըստ մանգանի, ալյումինի, երկաթի պարունակության համապատասխանում են որակի IV կամ V դասին, իսկ ըստ պղնձի, սելենի և վանադիումի պարունակության՝ որակի II դասին [5]:

Հողեր

Տարածքի ընդհանուր բնութագիրը

Արարատյան և Վայքի գոգավորության միջին լեռնային հատվածում (ծովի մակերևույթից 1250 – 1900 մետր բարձրության սահմաններում) հիմնականում տարածված են լեռնային շագանակագույն հողեր: Հորիզոնական զոնայականության համակարգում այս հողերը հանդիսանում են անցումային շերտ լեռնային գորշ կիսաանապատային և լեռնատափաստանային սևահողերի միջև:

Լեռնային շագանակագույն հողերի տարածման շրջանների ռելիեֆը միջին կտրտված է: Մեծ տարածքներ են զբաղեցնում ալիքաձև, թեք հարթությունները և կտրտված, լվացված լանջերը: Այս տարածքի ռելիեֆի ձևավորմանը մասնակցել են նստվածքային և նստվածքա - հրաբխային մայրական ապարները, որոնք հիմնականում ներկայացված են դելյուվիալ, խճային, կարբոնատային կավաավազներով:

Կլիման այս շրջանում չոր ցամաքային է՝ չափավոր ցուրտ ձմեռներով և տաք ամառներով: Համեմատաբար քիչ խոնավությունը նպաստում է սակավահզոր և միջին հզորությամբ, սակավահումուս, կավավազային, քարքարոտ լեռնային շագանակագույն հողերի ձևավորմանը:

Լեռնային շագանակագույն հողերը բնութագրվում են ոչ միատարր մեխանիկական կազմով, որը պայմանավորված է ռելիեֆի լիթոլոգիական պայմանների փոփոխությամբ և ներհողային հողմնահարման պրոցեսներով: Սարերի լանջերին ձևավորված հողերին բնորոշ է մայրական ապարների կտորների և ավազային ֆրակցիայի մեծ քանակություն, իսկ հարթ, թույլ թեք

տարածքների և միջլեռնային գոգավորությունների հողերը ավելի հարուստ են փոշու և տիղմային մասնիկներով ու աղքատ են խճաբեկորային քարերով: Փոշիանման և տիղմային միացությունները կուտակվել են ինչպես լանջային հոսքերի, այնպես էլ ներհողային հողմնահարման պրոցեսների միջոցով: Լեռնային շագանակագույն հողերը բնութագրվում են նաև բարձր քարքարոտությամբ և կմախքայնությամբ: Քարային ֆրակցիան դեպի խորը հորիզոնները շատանում է, իսկ փոշիանման և տիղմային ֆրակցիան, կապված մակերևութային էրոզիայի հետ, հումուսակուտակիչ հորիզոնում ավելի քիչ է, քան անցումային հորիզոնում:

Ընդհանուր առմամբ լեռնային շագանակագույն հողերին բնորոշ է՝

մակերեսից շագանակա – մոխրագույն գունավորում,

լավ տարբերակված գենետիկական հորիզոններ, մեծ խտություն, փոշիացած, ոչ պինդ, խճային կառուցվածք, հումուսակուտակիչ հորիզոնից դեպի մայրական ապար անցնելիս նկատվում է կարբոնատների, խճի և քարերի քանակի շատացում, բեկորա - խճային մայրական ապար, դեպի հողի խորը շերտերը մայրական ապարների հողմնահարման և կավառաջացման դանդաղում, կարբոնատների թելիկա - փոշիանման բնույթ, որոնք հիմնականում կուտակվում են խորը շերտերում:

Նախատեսվող գործունեության տարածքը ծառածածկ չէ, առկա են թփուտային բուսատեսակներ: Ռեհիլեֆը ժայռային է, աղքատ հողաբուսաշերտով: Հողի բերրի շերտի հաստությունը որոշ տեղերում հասնում 10-15 սմ, որոշ տեղերում ժայռային մերկացումներ են:

Հողի բերրի շերտը այն հատվածներում որտեղ առկա է կհավաքվի և կպահեստավորվի:

Ֆոտովոլտային կայանի հարթակների պատրաստումից առաջ հավաքվելու ու ժամանակավոր պահեստարանում է հավաքվելու տարածքի հողի բերրի շերտը:

Տեխնիկատրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները և լվացումը պետք է կատարել միայն մոտակա բնակավայրերի ավտոսպասարկման կետերում համապատասխան կետերում: Հողի աղտոտումը կենցաղային թափոնով կանխելու նպատակով սննդի ընդունման, հիգիենայի և աշխատակազմի հանգստյան վայրերում տեղադրվում են աղբամաններ: Հողի աղտոտումը քսայուղերի և վառելիքի արտահոսքով կանխելու նպատակով տրանսպորտային միջոցների լիզցավորումը, լվացումը և սպասարկումը իրականացնել Վայք քաղաքի մասնագիտացված կետերում:

Նախատեսվող գործունեության տարածքի հողերի նշանակությունը փոխված է էներգետիկ նշանակության: Բերի շերտի հաստությունը տատանվում 10-15 սմ խորությամբ:

Տարածքը հիմնականում հանդիսացել անջրդին արոտավայրեր, որտեղ մարդու անտրոպոգեն ազդեցությունը նշանակալի չէ:

Բուսական և կենդանական աշխարհ

Հայաստանի կենսաբազմազանությունը

Հարավային Կովկասի կենսաբազմազանությունն ու էկոհամակարգերը համաշխարհային նշանակություն ունեն: Բնության համաշխարհային հիմնադրամի (ԲՀՀ/WWF) կողմից Կովկասյան տարածաշրջանը ճանաչվել է, որպես «Գլոբալ 200» էկոտարածքներից մեկը: «Conservation International» կազմակերպությունն այս տարածաշրջանը ճանաչել է որպես համաշխարհային «թեժ կետ»:

Հայաստանի ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը և տեղաբաշխումը պայմանավորված է երկրի աշխարհագրական դիրքով, վերընթաց գոտիականությամբ ու տարածքի ռելեֆային բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է յուրօրինակ տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով: Հայաստանում ձևավորված լանդշաֆտակլիմայական տարբեր գոտիներին բնորոշ պայմանները նպաստել են բուսական ու կենդանական տեսակների աճելավայրերի և ապրելավայրերի բազմազանության առաջացմանը, որի արդյունքում առկա են՝ ինքնատիպ համակեցություններ, էնդեմիզմի բարձր մակարդակ:

Մոտեցում և մեթոդներ

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի ելակետային տվյալները հավաքագրվել և մշակվել են հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից: Հավաքվել և վերլուծվել է տվյալ տարածաշրջանի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ գրեթե ամբողջ գիտական տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տարածքներում (ՀՀ Կարմիր գրքում, 2010 թ.) գրանցված բույսերի և կենդանիների առկայությանը և անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների մշակմանը:

ՀՀ Վայոց ձորի մարզի Ագատեկ գյուղի վարչական սահմաններում նախատեսվում է կառուցել արևային ֆոտովոլտային կայան (տես՝ նկար 4):




Նկար 4. Ազատեկի տեղամաս

Չնայած նրան, որ Վայոց ձորի մարզը բավականին հարուստ է բնական էկոհամակարգերով և կենսաբազմազանությամբ, բուն ուսումնասիրվող տարածքներում այն գրեթե բացակայում է: Նախատեսվող աշխատանքների համար ընտրված տեղամասերը ենթարկված են անտրոպոգեն ազդեցության, քանի որ այդ տարածքները և շրջապատող լանջերը օգտագործվել և օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով, մասնավորապես, որպես սեզոնային արոտավայրեր: Այս ամենը հանգեցրել է նրան, որ ուսումնասիրվող տեղամասերում և հարակից տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, իսկ բուն նախատեսվող աշխատանքների համար ընտրված տեղամասերում բուսականությունը գրեթե բացակայում է: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ կենդանիների և բույսերի հազվագյուտ տեսակներ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Բուսական աշխարհ

Հայաստանի տարածքում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ (նկար 3): Ուսումնասիրվող տեղամասերը գտնվում է Դարալագյազի ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)) և գրավում է չոր տափաստանային ցածրալեռնային (1000-1600 մ ծ.մ.), տափաստանային միջինլեռնային (1400-2300 մ ծ. մ.) լանշաֆտային գոտիները (նկար 4), որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը:

Դարալագյազի ֆլորիստիկ շրջանը Հայաստանում երրորդն է բուսատեսակների թվով, որոնց թիվը 1740 է : Ֆլորիստիկ շրջանի բարձրունքային սահմանները գտնվում է (900 – 3500 մ ծ.մ.): Բուսականության հիմնական տիպերն են՝ կիսանապատային, անտառային, տափաստանային, մարգագետնային և նոսրանտառային, մերձալպյան և ալպյան մարգագետիններ: Էնդեմիկ բույսերի քանակը՝ 38 է, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների թիվը՝ 98 է, ըստ („Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա,, ՀՀ հինգերորդ ազգային զեկույցից, 2014 թ):




Նկար 5. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս
Ա.Լ. Թախտաջյանի (1954)

Տարածքի ֆլորայի վերաբերյալ գիտական տվյալները սակավաթիվ են, սակայն հավաքվել և վերլուծվել է տվյալ տարածաշրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական

տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ (ՀՀ բույսերի Կարմիր գրքում 2010թ.) գրանցված բույսերի առկայությանը:

Ազատեկի տեղամասը գտնվում է մոտավորապես 1600-1750մ:

Ուսումնասիրվող տարածաշրջանի բուսականությունն ունի արտահայտված քսերոֆիլ, տեղ-տեղ քսերո-մեզոֆիլ բնույթ: Բուսականության հիմնական տիպը տափաստանայինն է: Տեղ-տեղ հանդիպում են կիսաանապատային բուսականությամբ փոքր տարածքներ:



Նկար 6. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

Տարածաշրջանի բուսականությունը ներկայացված են Բարդաձաղկավորների, Վարդազգիների, Լոբազգիների, Հացազգիների, Շրթնաձաղկավորների, Խաչաձաղկավորների և այլ ընտանիքներին պատկանող տեսակներով:



Նկար 7. Հայաստանի Հանրապետության բուսական ծածկույթը

Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակներն են՝

- *Trifolium pratense* L. - Երեքնուկ մարգագետնային

- *Trigonella arcuata* C. A. Mey. - Հացհամեմ աղեղնաձև
- *Trigonella radiata* (L.) Boiss. - Հացհամեմ ճառագայթային
- *Vicia sativa* L. subs *nigra* (L.) Ehrh. - Գյուլուլ, Վիկ ցանովի
- *Festuca saxatilis* Schur - Շյուղախոտ ժայռային
- *Festuca sclerophylla* Boiss. ex Bisch. - Շյուղախոտ կոշտատերև
- *Hordeum bulbosum* L. - Գարի սոխուկավոր
- *Hordeum murinum* L. - Գարի մկնային, Մկնագարի
- *Allium pseudoflavum* Vved. - Սոխ կեղծ դեղին
- *Asparagus persicus* Baker - Ձներեկ, Ծնեփակ պարսկական
- *Asparagus verticillatus* L. - Ձներեկ, Ծնեփակ օղակավոր
- *Heliotropium ellipticum* Ledeb. - Արևադարձ էլիպսաձև
- *Myosotis daralaghezica* T.N. Pop. - Անմոռուկ դարալագյազի
- *Campanula latifolia* L. - Ջանգակ լայնատերև
- *Capparis spinosa* L. - Կապար փշոտ
- *Garhadiolus angulosus* Jaub. et Spach - Գարադիոլուս անկյունավոր
- *Helichrysum graveolens* (Bieb.) Sweet - Անթառամ բուրավետ
- *Helichrysum plicatum* DC. - Անթառամ ծալքավոր
- *Hieracium cymosum* L. - Ճուռակախոտ հովանոցանման
- *Inula britannica* L. - Կղմուխ բրիտանական
- *Lactuca serriola* L. - Մառուլ, Հազար, Կաթնուկ կողմնացույց
- *Scorzonera latifolia* (Fisch. et C.A. Mey.) DC. - Խինձ լայնատերև
- *Scorzonera rigida* Auch. ex DC. - Խինձ կոշտ
- *Serratula coriacea* Fisch. et C.A. Mey. ex DC. - Սղոցուկ, Արծպա կաշեկերպ
- *Achillea millefolium* L. - Հազարատերևուկ սովորական
- *Artemisia fragrans* Willd. - Օշինդր բուրավետ
- *Artemisia incana* (L.) Druce - Օշինդր ալեհեր
- *Artemisia vulgaris* L. - Օշինդր սովորական
- *Centauera depressa* Bieb. - Տերեփուկ սեղմված
- *Centaurea aggregata* Fisch. et C. A. Mey. - Տերեփուկ կիտված
- *Chondrilla juncea* L. - Ծամանիկ, Խիժաճարճատուկ կնյունանման
- *Cichorium intybus* L. - Եղերդակ, Ճարճատուկ սովորական
- *Cirsium ciliatum* (Murr.) Moench - Գեղավեր, Տատասկ թարթիչավոր
- *Cnicus benedictus* L. - Լայնատերևուկ օրհնված
- *Galinsoga parviflora* Cav. - Գալինսոգա մանրածաղիկ
- *Tanacetum vulgare* L. - Տարկավան, Լվածաղիկ սովորական
- *Taraxacum officinale* Wigg. - Խատուտիկ դեղատու
- *Tomanthea daralaghezica* (Fomin) Takht. - Տոմանթեա Դարեղեզիսի
- *Tussilago farfara* L. - Տատրակ սովորական, Խոճկորիկ

- *Xanthium italicum* Moretti - Դառնափուռ, Դառնուկ իտալական
- *Xanthium spinosum* L. - Դառնափուռ, Դառնուկ ասեղնավոր
- *Xeranthemum squarrosum* Boiss. - Չորաբույս, Անմեռուկ չոլած
- *Dianthus cretaceus* Adams - Մեխակ կավճային
- *Dianthus crinitus* Smith - Մեխակ խավավոր
- *Dianthus floribundus* Boiss. - Մեխակ տարագույն
- *Silene dianthoides* Pers. - Ծվծվուկ մեխականման
- *Silene italica* (L.) Pers. - Ծվծվուկ իտալական
- *Astragalus robustus* Bunge - Գագ ամուր
- *Caragana grandiflora* (Bieb.) DC. - Խոստեկ խոշորածաղիկ
- *Glycyrrhiza glabra* L. - Մատուտակ մերկ
- *Trifolium repens* L. - Երեքնուկ սողացող
- *Trifolium arvense* L. - Երեքնուկ վարելահողային
- *Trifolium campestre* Schreb. - Երեքնուկ դաշտային
- *Lathyrus sphaericus* Retz. - Տափուրռ գնդաձև
- *Lotus caucasicus* Kuprian. ex Juz. - Եղջերառվույտ կովկասյան
- *Medicago minima* (L.) Bartalini - Առվույտ փոքրիկ
- *Medicago sativa* L. var *parviflora* Grossh. - Առվույտ ցանովի
- *Melilotus officinalis* (L.) Pall. - Իշառվույտ դեղատու
- *Ononis arvensis* L. - Եզնարգել վարելահողային
- *Phleum paniculatum* Huds. - Միզախոտ հուրանաձև
- *Phleum pratense* L. - Միզախոտ մարգագետնային
- *Poa annua* L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ միամյա
- *Secale montanum* Guss. - Տարեկան, Աշորա լեռնային
- *Stipa capillata* L. - Սմբուլ, Փետրախոտ մազոտ
- *Stipa tirsia* Steven - Սմբուլ, Փետրախոտ նեղատերև
- *Astrodaucus orientalis* (L.) Drude - Աստղագագար արևելյան
- *Chaerophyllum aureum* L. - Շուշանաբանջար ոսկեգոծ
- *Eryngium billardieri* Delaroché - Երնջնակ Բիլարդեի
- *Prangos ferulacea* (L.) Lindl. - Պրանգոս նարդեսանման
- *Erodium cicutarium* (L.) L'Her. - Ճայկտուց խնդամուլային
- *Hypericum perforatum* L. - Սրոհունդ խոցված
- *Iris atropatana* Grossh. - Հիրիկ ատրպատականյան
- *Bromopsis variegata* (Bieb.) Holub subsp. *variegata* - Բրոմոպսիս խայտաբղետ
- *Cynodon dactylon* (L.) Pers. - Շնատակ, Արվանտակ մատնաձև, Բերմուղյան խոտ
- *Dactylis glomerata* L. - Ոզնախոտ հավաքված
- *Ceratocarpus arenarius* L. - Եզնաբզեզ ավազուտային
- *Chenopodium album* L. - Թելուկ սպիտակ /կամ սովորական/

- *Chenopodium botrys* L. - Թելուկ հոտավետ
- *Salsola ericoides* Bieb. - Օջան հավամբզանման
- *Sedum album* L. - Թանթռնիկ սպիտակ
- *Alyssum szovitsianum* Fisch. et C. A. Mey. - Վառվռուկ Սովիչի
- *Capsella bursa-pastoris* (L.) Medik. - Ծոսապաշար, Հովվամաղախ
- *Conringia perfoliata* (C. A. Mey.) N. Busch - Կոնրինգիա մահականման
- *Crambe orientalis* L. - Ծովակաղամբ արևելյան
- *Thlaspi perfoliatum* L. - Շնկոտեմ թափանցված
- *Lamium album* L. - Խուլ եղինջ սպիտակ
- *Mentha longifolia* (L.) Huds. - Անանուխ, Դաղձ երկարատերև
- *Nepeta mussinii* Spreng. - Կատվադաղձ Մուսինի
- *Origanum vulgare* L. - Խնկածաղիկ սովորական
- *Salvia* sp. – Եղեսպակ
- *Salvia hydrangea* DC. ex Benth. - Եղեսպակ դրախտավարդային
- *Salvia viridis* L. - Եղեսպակ կանաչ
- *Acantholimon armenum* Boiss. - Ոգնաթուփ հայկական
- *Portulaca oleracea* L. - Դանդուռ սովորական
- *Clematis orientalis* L. - Հոտոտ արևելյան
- *Delphinium orientale* J. Gay - Ոջլախոտ արևելյան
- *Thalictrum minus* L. - Քնձմնձուկ փոքր
- *Reseda lutea* L. - Հափուկ դեղին
- *Rhamnus cathartica* L. - Դժնիկ լուծողական
- *Rhamnus pallasii* Fisch. et C.A. Mey. - Դժնիկ քաղցր
- *Hyoscyamus niger* L. - Բանգի սև
- *Tamarix ramosissima* Ledeb. - Կարմրան ճյուղառատ
- *Stachys inflata* Benth. - Աբեղախոտ փքված
- *Teucrium polium* L. - Լերդախոտ ալեհեր
- *Juncus gerardii* Loisel. - Կնյուն Ժերարի
- *Atraphaxis spinosa* L. - Փշամանդիկ փշավոր
- *Polygonum convolvulus* L. - Մատիտեղ փաթաթվող
- *Polygonum aviculare* L. - Մատիտեղ ճնճղուկի
- *Rumex acetoselloides* Bal. - Ավելուկ ավելուկանման
- *Rumex crispus* L. - Ավելուկ գանգուր
- *Asperula prostrata* (Adams) C. Koch - Գետնաստղ գետնատարած
- *Galium aparine* L. - Մակարդախոտ կաչուն
- *Galium articulatum* Lam. - Մակարդախոտ հատվածավոր
- *Galium cruciata* (L.) Scop. - Մակարդախոտ խաչանման
- *Rubia tinctorum* L. - Տորոն ներկատու

- *Urtica dioica* L. - Եղինջ երկտուն
- *Verbascum oreophilum* K. Koch - Խոնդառ սարասեր /լեռնասեր/
- *Helianthemum ledifolium* (L.) Mill. - Արևանթեմ սովորական
- *Convolvulus arvensis* L. - Պատաստուկ դաշտային
- *Swida australis* (C.A. Mey.) Pojark. ex Grossh. - Ճապկի հարավի
- *Bryonia alba* L. - Լոշտակ սպիտակ
- *Cuscuta cesattiana* Bertol. - Գայլխոտ, Գաղձ Ցեզատի
- *Peganum harmala* L. - Սպանդ սովորական
- *Plantago major* L. - Ջղախոտ, Եզան լեզու մեծ

Տարածաշրջանին բնորոշ, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները բերված են աղյուսակ 2-ում:

Սակայն հարկ է նշել, որ բուն ուսումնասիրվող տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան: Քանի որ այդ տարածքները ենթարկված են անտրոպոգեն ազդեցության, իսկ բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, իսկ բուն նախատեսվող աշխատանքների համար ընտրված տեղամասերում բուսականությունը գրեթե բացակայում է: Ուստի դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Աղյուսակ 2

N	Անվանումը	Լատ. Անվանումը	ՀՀ Կարմիր գիրք
1	Խինձ Շովիցի	<i>Scorzonera szovitzii</i> Grossh	EN
2	Երնջնակ Վանատուրի	<i>Eryngium wanaturii</i> Woronow	EN
3	Տոմանթեա դարեղեգիսի	<i>Tomanthea daralaghezica</i> (Fomin) Takht.	EN
4	Ռոխելիա սրտաձևաբաժակ	<i>Rochelia cardiosepala</i> Bunge	EN
5	Վահանակերպ տափակապատիճակ	<i>Peltariopsis planisiliqua</i> (Boiss.) N. Busch	EN
6	Զանգակ ազգակից	<i>Campanula propinqua</i> Fisch. & C. A. Mey.	VU
7	Կիզիլխոտ լայնատերև	<i>Eriophorum latifolium</i> Hoppe	VU
8	Հիրիկ ատրպատականյան	<i>Iris atropatana</i> Grossh.	EN

Կենդանական աշխարհ

Հավաքվել և վերլուծվել է տվյալ տարածաշրջանի ֆաունայի վերաբերյալ գրեթե ամբողջ գիտական տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ տարածաշրջանին բնորոշ (ՀՀ կենդանիների Կարմիր գրքում 2010թ.) գրանցված կենդանիների առկայությանը:

Ցամաքային անողնաշարավորներ

Տարածքի ցամաքային անողնաշարավորների վերաբերյալ հասանելի գրականության տվյալներ չկան, ուստի ստորև բերված տեղեկատվությունը Վայոց ձորի մարզի կտրվածքով է: Վայոց ձորի մարզի (ինչպես նաև ամբողջ Հայաստանի) անողնաշար կենդանիները ուսումնասիրված են խիստ անհավասարաչափ, ուստի անողնաշարավորների ֆաունայի ամբողջական վերլուծությունը անհնար է և աննպատակահարմար: Ստորև բերված տվյալները մի շարք համեմատաբար լավ ուսումնասիրված բարձրագույն տաքսոնների (կարգաբանական խմբերի) վերաբերյալ է: Այս տաքսոնները կազմում են Հայաստանի ֆաունայի մոտ 1/8-ըը, ունեն զանազան էկոլոգիական կապեր, ուստի բերված տվյալները բավական ռեպրեզենտատիվ են (ներկայացուցչական):

Ընդհանուր առմամբ Վայոց ձորի մարզից հայտնի են անողնաշար կենդանիների 70 կարգերի ներկայացուցիչներ, առավել բազմաթիվ են միջատները՝ 28 կարգ Հայաստանից հայտնի 30-ից: Փափկամարմինները, սարդակերպերը և բազմատանիները ներկայացված են 7-ական, ինեցգետնակերպերը՝ 5 կարգով: Չկան աշխատություններ, հատկապես նվիրված Վայոց ձորի անողնաշարների որևէ խմբին: Հայաստանի ֆաունայի տարբեր բարձրագույն կարգաբանական խմբերին նվիրված ակնարկային աշխատությունների վերլուծությունը թույլ տվեց հայտնաբերել Վայոց ձորի մարզից 1213 տեսակ, որոնք պատկանում են Միջատների դասին և Փափկամարմինների տիպին (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Տաքսոն	Տեսակների քանակը	Տեղակատվության աղբյուրները
	Վայոց ձորի մարզ	
Տիպ թափկամարմիններ (Mollusca) (միայն ցամաքային)	59	Акрамовский, 1967
Տիպ Հատվածոտանիներ (Arthropoda)		
Դաս Միջատներ (Insecta)		
Կարգ Ուղղաթևեր (Orthoptera)		
Վերնաընտանիք Ծղրիդներ (Tettigonoidea)	12	Авагян, 1984

Վերնաընտանիք Մորեխներ (Acridoidea)	32	Авагян, 1975
Կարգ Հավասարաթևեր (Homoptera)		
Ենթակարգ Որդաններ (Coccoidea)	26	Борхсениус, 1949, Тер-Григорян, 1973
*Դենդրոֆիլ հավասարաթևեր	60	Мирзоян, 1977
Կարգ Կիսակարծրաթևեր (Hemiptera)		
Դենդրոֆիլ կիսակարծրաթևեր	5	Мирзоян, 1977
Կարգ Կարծրաթևեր կամ բզեզներ (Coleoptera)		
Ընտանիք Գնայուկ բզեզներ (Carabidae, pars.)	96	Яблоков-Хнзорян, 1976
Վերնաընտանիք Թերթիկաբեղավորներ (Scarabaeoidea)	103	Яблоков-Хнзорян, 1967
Ընտանիք Չրխկաններ (Elateridae)	20	Марджанян, 1986
Ընտանիք Թարախահաններ (Meloidae)	24	Яблоков-Хнзорян, 1983
Ընտանիք Փոշեկերներ (Alleculidae)	14	Яблоков-Хнзорян, 1983
Ընտանիք Երկարաբեղիկներ (Cerambycidae)	42	Плавильщиков, 1949
Ընտանիք Ընդակերներ (Bruchidae)	26	Карапетян, 1985
Ընտանիք Փղիկներ (Curculionidae)	140	Тер-Минасян, 1947
* Դենդրոֆիլ կարծրաթևեր	82	Мирзоян, 1977
Կարգ Թեփուկաթևեր կամ թիթեռներ (Lepidoptera)		
Ցերեկային թիթեռներ (Rhopalocera)	166	Tuzov (ed.), 1997, 2000; Ханамирян, Калашян, 2011
Ընտանիք Երկրաչափ թիթեռներ (Geometridae)	110	Վարդիկյան, 1980
Ընտանիք Բվիներ (Noctuidae) (դենդրոֆիլ)	78	Мирзоян, 1991
Heterocera ենթակարգի այլ դենդրոֆիլ տեսակներ	36	Мирзоян, 1977
Կարգ Երկթևեր (Diptera)		
Ընտանիք Մլակներ (Simuliidae)	14	Тертерян, 1968
Դենդրոֆիլ երկթևեր	2	Мирзоян, 1977
Կարգ Թաղանթաթևեր (Hymenoptera)		
Ընտանիք Մրջուկներ (Formicidae)	34	Аракелян, 1994

Ընտանիք Էնցիրտիդներ (Encyrtidae)	4	Эртевцян, 1986
* Դենդրոֆիլ թաղանթաթևեր	28	Мирзоян, 1977
Ընդամենը	1213	

*Բացառությամբ առանձին հաշվարկված ընտանիքների.

Հայաստանի Կարմիր գրքում գրանցված հազվադեպ և անհետացող 155 անողնաշար կենդանատեսակներից Վայոց ձորի մարզում ներկայացված են 29-ը (2 փափկամարմին և 27 միջատ):

ՀՀ Կարմիր գրքում, ԲՄՊՊ Կարմիր ցուցակում, ինչպես նաև Բեռնի կոնվենցիայի հավելված II -ում գրանցված անողնաշար կենդանիների ցանկ բերված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

N	Անվանումը	Լատ. անվանումը	ՀՀ Կարմիր գիրք	ԲՄՊՊ Կարմիր ցուցակ	Բեռն. Կոնվ. Հավ. II
Փափկամարմիններ - Mollusca					
1	Խճաքարային խխունջ	Orculella ruderalis	CR		
2	Սանդղաձև խխունջ	Turanena scalaris	CR		
Միջատներ - Insecta					
Կարգ ճպուռներ (Odonata)					
3	Նմանաձև ճպուռ	Onychogomphus assimilis fulvipennis	VU	VU	
4	Միմալեկմա ճպուռ	Sympecma paedisca	VU		
Կարգ Ուղղաթևեր (Orthoptera)					
5	Սդոցապոչ հայկական	Poecilimonella armeniaca	EN		
Կարգ Կարծրաթևեր կամ բզեզներ (Coleoptera)					
6	Կեղծ խոտային չրիսկան	Cardiophorus pseudogramineus	EN		
7	Խնձորյանի գնայուկ	Deltomerus khnzoriani	CR		
8	Տոնական գնայուկ	Poecilus festinus	VU		
9	Արենիական գնայուկ	Pristonychus arenicus	CR		
10	Հայկական սևամարմին	Armenohelops armeniacus	EN		
11	Երկգիծ երկարաբեղիկ	Dorcadion bistriatum	EN		
12	Պիկի երկարաբեղիկ	Phytoecia pici Reitter	EN		

Կարգ Թևիուկաթևեր կամ թիթեռներ (Lepidoptera)					
13	Մնեմոզինա կամ սև ապոլոն	<i>Parnassius mnemosyne rjabovi</i>	VU		+
14	Ապոլոն	<i>Parnassius apollo kashtshenkoi</i>	VU		+
15	Ալեքսանոբ առագաստաթիթեռ	<i>Papilio alexanor orientalis</i>	VU		+
16	Ավրորինա դեղնաթիթեռ	<i>Colias aurorina</i>	VU		
17	Կանաչավուն դեղնաթիթեռ	<i>Colias chlorocoma</i>	VU		
18	Ռոմանովի թումարես	<i>Tomares romanovi</i>	VU		
19	Երևանայան կապտաթիթեռ	<i>Agrodiaetus eriwanensis</i>	EN		
20	Նինայի կապտաթիթեռ	<i>Agrodiaetus niniae</i>	VU		
21	Հուբերտի կապտաթիթեռ	<i>Agrodiaetus huberti</i>	EN		
22	Սուռակովի կապտաթիթեռ	<i>Agrodiaetus surakovi</i>	EN		
23	Իֆիգենիա կապտաթիթեռ	<i>Agrodiaetus iphigenia araratensis</i>	EN		
24	Թուրքական կապտաթիթեռ	<i>Agrodiaetus turcicus</i>	VU		
25	Ալկոն կապտաթիթեռ	<i>Maculinea alcon monticola</i>	VU		
26	Արիոն կապտաթիթեռ	<i>Maculinea arion zara</i>	VU		
27	Կաչուկի իլիկաթիթեռ	<i>Hyles hippophaes caucasica</i>	VU	DD	+
28	Պրոզերպինա իլիկաթիթեռ	<i>Proserpinus proserpina</i>	VU	DD	
Կարգ Թաղանթաթևեր (Hymenoptera)					
29	Մգաթև մեղու	<i>Lithurge fuscipenne</i>	VU		

Հարկ է նշել, որ այս տեսակներից 22-ը հայտնի է Արփա գետի հովտի միայն հարավային մասից՝ Դարալագյազի լեռնաշղթայից, ուստի, նրանց հանդիպելը հետազոտվող տարածքներում շատ քիչ հավանական է:

Թվարկված տեսակներից Նմանաձև ճպուռը, Կաչուկի իլիկաթիթեռը, Պրոզերպինա իլիկաթիթեռը գրանցված են Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում (IUCN Red List of Threatened Species), իսկ Մնեմոզինա կամ սև ապոլոն, Ապոլոն, Ալեքսանոբ առագաստաթիթեռ, Կաչուկի իլիկաթիթեռ, Պրոզերպինա իլիկաթիթեռ – նաև Բերնի կոնվենցիայի Հավելված 2-ում (Annex II of Bern Convention):

Կաթնասուններ

Տարածաշրջանին բնորոշ կաթնասունների ցանկը, ինչպես նաև ՀՀ կենդանիների Կարմիր գրքում և ԲՄՊՊ Կարմիր ցուցակում առկայությունը բերված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

N	Անվանումը	Լատ. անվանումը	ՀՀ Կարմիր գիրք	ԲՄՊՊ Կարմիր ցուցակ
1	Փոքր խլուրդ	Talpa caucasica		
3	Անտառային քնամուկ	Myoxus glis		
4	Անտառային մուկ	Apodemus sylvaticus		
5	Պարսկական ավազամուկ	Meriones persicus		
6	Անտառային մուկ	Apodemus sylvaticus		
7	Սովորական դաշտամուկ	Microtus arvalis		
8	Սովորական ոզնի	Erinaceus concolor		
9	Աքիս	Mustela nivalis		
10	Քարակզաքիս	Martes foina		
11	Նապաստակ	Lepus europaeus		
12	Սովորական աղվես	Vulpes vulpes		
13	Գորշուկ	Meles meles		
14	Գայլ	Canis lupus		
15	Լուսան	Lynx lynx		
16	Գորշ արջ	Ursus arctos	VU	LC

Սողուններ և երկենցաղներ

Տարածաշրջանի հերպետոֆաունան, ինչպես նաև ՀՀ կենդանիների Կարմիր գրքում և ԲՄՊՊ Կարմիր ցուցակում առկայությունը ներկայացված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

N	Անվանումը	Լատ. անվանումը	ՀՀ Կարմիր գիրք	ԲՄՊՊ Կարմիր ցուցակ
Երկենցաղներ - Amphibia				
1	Կանաչ դոդոշ	Bufo viridis		

2	Փոքրասիական ծառագորտ	Hyla savignyi		
3	Լճագորտ	Pelophylax ridibundus		
4	Փոքրասիական գորտ	Rana macrocnemis		
Սողուններ - Reptilia				
Սողեսներ - Sauria				
5	Դեղնափորիկ	Pseudopus apodus		
6	Վալենտինի ժայռային մողես	Darevskia valentini		
7	Գեղիրան օձագլուխ	Ophisops elegans Menetries		
8	Միջին մողես	Lacerta media		
9	Կովկասյան ագամա	Laudakia caucasia		
10	Ռատդեի ժայռային մողես	Darevskia raddei		
11	Շերտավոր մողես	Lacerta strigata		
Օձեր - Serpentes				
12	Որդանման կույր օձ	Typhlops vermicularis		
13	Արևմտյան վիշապիկ	Eryx jaculus		
14	Ջրային լորտու	Natrix tessellata		
15	Սովորական լորտու	Natrix natrix		
16	Կապարագույն սահնօձ	Hemorrhois nummifer		
17	Ձիթապտղագույն սահնօձ	Platyceps najadum		
18	Կարմրափոր սահնօձ	Hierophis schmidtii		
19	Անդրկովկասյան սահնօձ	Zamenis hohenackeri	VU	
20	Վզնոցավոր էյրենիս	Eirenis collaris		
21	Հայկական էյրենիս	Eirenis punctatolineatus		
22	Կովկասյան կատվօձ	Telescopus fallax	VU	
23	Հայկական իժ կամ Ռատդեի իժ	Vipera (Montivipera) raddei	VU	NT
24	Կովկասյան գյուրգա	Vipera (Macrovipera) lebetina		

Թռչուններ

Տարածաշրջանին բնորոշ թռչունների ցանկը, ինչպես նաև ՀՀ կենդանիների Կարմիր գրքում և ԲՄՊՊ Կարմիր ցուցակում առկայությունը բերված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

	Թռչունների անվանումները	Լատիներեն անվանումը	Բնաբույս	ՀՀ Կարմիր գիրք	ԲՊՄՍ Կարմիր ցուցակ
1.	Գառնանգղ	Gypaetus barbatus		VU	LC
2.	Գիշանգղ	Neophron percnopterus		EN	EN
3.	Մպիտակագլուխ անգղ	Gyps fulvus		VU	LC
4.	Օձակեր արծիվ	Circaetus gallicus		VU	LC
5.	Մափսան	Falco peregrinus		VU	LC
6.	Մովորական տատրակ	Streptopella turtur	+		
7.	Եվրոպական բվիկ	Otus scops	+		
8.	Լորաճուռակ	Accipiter nisus			
9.	Մեծ ճուռակ	Buteo buteo			
10.	Տափաստանային ճուռակ	Buteo rufinus	+		
11.	Քարարծիվ	Aquila chrysaetos		VU	LC
12.	Մովորական հողմավար բազե	Falco tinnunculus	+		
13.	Հոպոպ	Upupa epops	+		
14.	Ժուլան	Lanius cristatus	+		
15.	Կարմրակատար շամփրուկ	Lanius senator	+	VU	LC
16.	Կապույտ քարակեռնեխ	Monticola solitarius	+		
17.	Սևագլուխ դրախտապան	Emberiza melanocephala	+		
18.	Գյուղական ծիծեռնակ	Hirundo rustica			
19.	Քաղաքային ծիծեռնակ	Delichon urbicum			
20.	Սև մագաղաթն ծիծեռնակ	Apus apus			
21.	Ոսկեգույն մեղվակեր	Merops apiaster	+		
22.	Սևախայտ քարաթռչնակ	Oenanthe hispanica	+		
23.	Այծկիթ	Caprimulgus europaeus	+		
24.	Կորեկնուկ	Miliaria calandra	+		
25.	Քարակաքավ	Alectoris chuker	+		
26.	Մոխրագույն կաքավ	Perdix perdix	+		
27.	Լոր	Coturnix coturnix	+		

	Թռչունների անվանումները	Լատիներեն անվանումը	Բնակավայր	ՀՀ Կարմիր գիրք	ԲՊՄՄ Կարմիր ցուցակ
28.	Անտառային աղավնի	Columba palumbus			
29.	Բվեճ	Bubo bubo		VU	LC
30.	Սիրիական փայտփոր	Dendrocopus syriacus	+		
31.	Փուփուլավոր արտույտ	Galerida cristata	+		
32.	Սպիտակ խաղտունիկ	Motacilla alba	+		
33.	Մովրական քարաթռչնակ	Oenanthe oenanthe	+		
34.	Մովրական կարմրատուտ	Phoenicurus phoenicurus	+		
35.	Սև կեռնեխ	Turdus merula	+		
36.	Մոսնձակեռնեխ	Turdus viscivorus	+		
37.	Կովկասյան գեղգեղիկ	Phylloscopus sindianus	+		
38.	Մոխրագույն շահրիկ	Sylvia communis	+		
39.	Մեծ երաշտահավ	Parus major	+		
40.	Ժայռային փոքր սիտեղ	Sitta neumayer	+		
41.	Լեռնային դրախտապան	Emberiza cia	+		
42.	Ամուրիկ	Fringilla coelebs			
43.	Կարմրակատար	Carduelis carduelis	+		
44.	Կարմրաճակատ սերինոս	Serinus pusillus	+		
45.	Կանեփնուկ	Carduelis cannabina	+		
46.	Տնային ճնճղուկ	Passer domesticus	+		
47.	Ժայռային ճնճղուկ	Petronia petronia	+		
48.	Անտառային կաչաղակ	Garrulus glandarius	+		
49.	Մովրական կաչաղակ	Pica pica	+		
50.	Մոխրագույն ագռավ	Corvus corone	+		
51.	Սև ագռավ	Corvus corax	+		

Ջրակենսաբանություն

Ուսումնասիրվող տարածքների միջնամասով է անցնում Արփա գետը, որը սկիզբ է առնում Թեքսարի լեռների աղբյուրներից: Արփա գետում գոռբենյոսի համակեցությունը աչքի է ընկնում իր տեսակային բազմազանությամբ:

Ըստ առկա գրականության՝ Արփա գետը կենսամիջավայր է հանդիսանում աղյուսակ 8-ում բերված ձկնատեսակների համար:


Աղյուսակ 8

N	Անվանումը	Լատ. անվանումը	ՀՀ Կարմիր գիրք	Հացվող տարածքում հնարավոր առկայություն
1	Կարմրախայտ	Salmo trutta fario		
2	Սպիտակաձուկ	Alburnus filippii		+
3	Բռամ	Alburnus filippii		
4	Կուրի բեղաձուկ	Barbus cyri		+
5	Կուրի ենթաբերան	Chondrostoma cyri		+
6	Քուռի Քառթակ	Gobio Gobio		+
7	Կովկասյան թեփուղ	Squalius orientalis		+
8	Արևելյան տառելիիկ	Alburnoides eichwaldii		+
9	Անգորական լերկաձուկ	Oxynoemacheilus angorae		+
10	Ամուրյան նրբաձուկ	Pseudorasbora parva		+
11	Արծաթափայլ կարաս	Carassius gibelio		+
12	Արծաթաձուկ	Leucaspis delineatus		+
13	Հաշամ	Leuciscus aspilus	VU	
14	Կուրի լերկաձուկ	Oxynoemacheilus brandtii		+
15	Սովորական լոբո	Silurus glanis		
16	Կուրի կողակ	Capoeta capoeta capoeta		+

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ 60%-ը, ներառյալ հազվագյուտ,

վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:



Նկար 8. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները

- Ուսումնասիրվող տարածքներին մոտ գտնվող բնության հուշարձանները երեքն են՝
- «Ագատեկի» բրածո ֆլորա - Վայոց Ձոր մարզ, Ագատեկ գյուղի մոտ,
 - «Ցիցքար» ժայռագագաթ - Վայոց Ձոր մարզ, Վայք քաղաքից 0.5 կմ հս-արմ,

- «Անանուն» որմնաքանդակներ - Վայոց Ձոր մարզ, Երևան-Գորիս խճուղու ձախ կողմում, Ջերմուկ տանող ճանապարհից 44 մ դեպի Գորիս:

Ուսումնասիրվող տեղամասը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի, դեպի հյուսիս-արևելք գտնվում են <<Ջերմուկի ջրաբանական>> պետական արգելավայրը, <<Ջերմուկի անտառային>> պետական արգելավայրը, <<Հերիերի նոսրանտառային>> պետական արգելավայրը: Տեղամասից դեպի հյուսիս-արևմուտք գտնվում է <<Եղեգիս>> պետական արգելավայրը: Հաշվի առնելով ԲՀՊՏ-ների հեռավորությունը ուսումնասիրվող տեղամասերից, կարելի է փաստել, որ նախատեսվող աշխատանքները ազդեցություն չեն ունենա արգելավայրերի վրա:


Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ, վավերացրել է կենսաբազմազանությանն առնչվող մի շարք միջազգային բնապահպանական պայմանագրեր, կոնվենցիաներ և համաձայնագրեր, որոնցով ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը նպաստում է շրջակա միջավայրի և կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը:

Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիայի ներքո Հայաստանում «Էմերալդ» ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում առանձնացվել են նաև բնապահպանական տեսակետից մի շարք արժեքավոր տարածքներ, որում ներառված 23 տարածքներից 8-ը ընդգրկված են Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգում (<http://emerald.eea.europa.eu/>):

Ուսումնասիրվող տեղամասերը ներառված չեն «Էմերալդ» ցանցի մեջ և նրա հետ անմիջական սահմաններ չունեն: Ազատելի տեղամասին ամենամոտը գտնվում է AM000012 թեկնածու տարածքը (տես՝ նկար 9, նկար 10):



Նկար 9. Հայաստանի Հանրապետությունում առկա «Էմերալդ» AM0000012 թեկնածու տարածքը



Մակայն, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում առկա «Էմերալդ» թեկնածու տարածքների սահմանների օպտիմալացման աշխատանքների համար 2018թ.-ին ձևավորված գիտական խմբի կողմից ներկայացված նոր տարածքները, մասնավորապես AM0000012 և AM000009 թեկնածու տարածքները բավականին կրճատված են, ուսումնասիրվող տարածքի հետ անմիջական սահմաններ չունեն և գտնվում են բավականին հեռու (տես՝ նկար 11, նկար 12):

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր վնասակար ազդեցության բնութագրումը, դրանց բացառման, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր

Տնտեսվարողները, որոնց գործողությունների ընթացքում հնարավոր է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներին կամ բուսատեսակներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար: Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը (ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենք, 03.04.2000թ հոդված 18, ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենք 23.11.1999 թ հոդված 17):

Ուսումնասիրվող տեղամասերում նախատեսվում է կառուցել երկու արևային ֆոտովոլտային ենթակայան: Հաշվի առնելով ընտրված տեղադիրքերը և գործունեության տեսակը, կարելի է փաստել, որ կենսաբազմազանության վրա ազդեցությունը կլինի ոչ էական, քանի որ ընտրված տեղամասերը արդեն իսկ դեգրադացված են, իսկ բնական էկոհամակարգերը բացակայում են: Այնուամենայնիվ, կենսաբազմազանության վրա կլինի որոշակի ազդեցություն, որը կկրի կարճատև բնույթ և պայմանավորված կլինի միայն շինարարության փուլում հողային աշխատանքներով: Ուստի այն մեղմելու համար, նախքան հողաշինարարական աշխատանքների սկսելը, բուն տեղամասերը պետք է հետազոտվեն բուսաբանների և կենդանաբանների կողմից՝ բացառելու համար ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի ու կենդանիների, նրանց աճելավայրերի, բների, որջերի ու թաքսոցների առկայությունը: Անհրաժեշտ է, որ կենսաբազմազանության ուսումնասիրությունները իրականացվեն վաղ գարնանից մինչև ամռան կեսերը ընկաց ժամանակահատվածում: ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում ինֆրակառուցվածքների տեղադիրքերը պետք է ընտրել այնպես, որ հնարավոր լինի շրջանցել այդ բուսատեսակների աճելավայրերը, իսկ հայտնաբերված տարածքները պետք է առանձնացվեն որպես պահպանվող գոտիներ: Աշխատանքները պետք է իրականացվեն բուսաբանի կողմից կամ ղեկավարությամբ:

Բուսական աշխարհը կկրի որոշակի ազդեցություն, ուստի պետք է որքան հնարավոր է քիչ հողաբուսական շերտ հեռացնել աշխատանքներ իրականացնելիս: Բուսական աշխարհին մեծապես կարող է վնասել տեխնիկական միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս՝ հատկապես երբ հողային ծածկույթը խոնավ է: Ուստի այն մեղմելու կամ բացառելու համար ամբողջ հողաշինարարական աշխատանքների ընթացքում պետք է բացառվի տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական

տարածքներից դուրս: Բուսական աշխարհին մեծապես կարող է վնասել, տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը, ուստի կանխելու համար նման միջադեպերը պետք է տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործվեն բացառապես սարքին վիճակում:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները լինելով շարժուն, համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն: Բացառություն են կազմում անթև անողնաշարավորները և նրանք, որոնց ապրելավայրը, բույնը կամ որջը կհայտնվի հողաշինարարական աշխատանքների տեղամասերում: Ուստի այն մեղմելու համար պետք է հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը: Տարածքները, որտեղ կհայտնաբերվեն թռչնի բներ, որոնց մեջ կլինեն ձվեր կամ ձագեր, պետք է դադարեցվեն աշխատանքները մինչ նրանց չվելը: Անտրոպոգեն ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար ցանկալի է հողաշինարարական աշխատանքները իրականացնել ուշ աշնան և ձմռան ամիսներին, քանի որ թռչունների գերակշիռ մասը արդեն իսկ չված է լինում, իսկ որոշ կենդանատեսակներ գտնվում են ձմեռանոցներում: Ամբողջ աշխատանքների ընթացքում, հատկապես գիշերային ժամերին հնարավորինս պետք է նվազեցվի աղմուկն ու լուսավորությունը: Աշխատանքների իրականացման տարածքներում պետք է արգելել որսը, կենդանիներին վնասելն ու սաստկացնելը:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի մասին տվյալները հավաքագրվել և մշակվել են հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից: Հավաքվել և վերլուծվել է ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալ շրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսատեսակների և կենդանատեսակների առկայությանը և անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների մշակմանը:

Պատմամշակութային հուշարձաններ

Հայաստանը չափազանց հարուստ մշակութային ժառանգություն ունեցող երկիր է, որի ակունքները ձգվում են դեպի հազարամյակների խորքերը: Այստեղ հայտնի են շուրջ 33 000 պատմության և մշակույթի հուշարձաններ, ներկայացված 4500 առանձին համալիրներով,

որոնք զբաղեցնում են մոտ 20 000 հեկտար ընդհանուր տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հուշարձանները պաշտպանված են օրենքով և բաժանվում են տեղական և հանրապետական նշանակության: Դրանց մեջ հատկապես առանձնանում են թվով 80 համալիրներ, որոնք ունեն կարևորագույն պատմական, ճարտարապետական, գիտական, արվեստագիտական և մշակութային բացառիկ արժեք (ընդգրկում են մոտ 400 ճարտարապետական հուշարձաններ): Ոչ վաղ անցյալում դրանք ընդգրկված էին ԽՍՀՄ համամյութենական մշակութային և պատմական արժեք ներկայացնող հուշարձանների ցուցակում: Ներկայումս, ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակը, որը, սկսած 1963 թ. համալրվել է առավելքան 630 պատմական հուշարձաններով և բնության տարածքներով ամբողջ աշխարհում, ներառում է նաև Հայաստանի տարածքի որոշ հուշարձաններ: Դրանց շարքում են Հաղպատի վանական համալիրը, Սանահնի վանական համալիրը և միջնադարյան կամուրջը, Էջմիածինն իր բազմաթիվ հուշարձաններով, Զվարթնոցի տաճարը, Գեղարդավանքի համալիրը և Ազատ գետի վերին հատվածը: Հայաստանի տարածքի այլ հուշարձաններ ևս նախապատրաստվում են ընդգրկվելու ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցուցակներում, որոնք են՝ Նորավանքի վանական համալիրը, պարսկական Կապույտ մզկիթը և միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը: Այդ պատճառով մշակութային ժառանգության գնահատումը և կառավարումը նման ծրագրերի իրականացման տարածքի համար գերակա խնդիր է և պահանջում է հնագետի փորձագիտական եզրակացություն: Հնագիտական փորձագիտության խնդիրներն են.

1. Բացահայտել ծրագրի իրականացման հնարավոր ազդեցությունները նյութական մշակույթի սկզբնաղբյուրների վրա, որոնք են շարժական և անշարժ հուշարձանները, հնավայրերը, կառուցվածքները և լանդշաֆտները, որոնք ունեն, հնագիտական, հնէաբանական, պատմական, ճարտարապետական, կրոնական, գեղագիտական կամ մշակութային նշանակություն;

2. Դաշտային ուսումնասիրության արդյունքում նախագծի իրականացման տարածքում առկա հնագիտական հուշարձանների համար, տեղորոշել և բնորոշել հայտնի և նոր հայտնաբերված հնավայրերը, հանդես գալ որոշակի առաջարկներով՝ կապված հուշարձանների վրա ազդեցության մեղմացման միջոցառումների մշակման հետ, որոնք պետք է արտացոլվեն նախատեսվող գործունեության հետագա բոլոր փուլերում՝ ՇՄԱԳ հիմնական հաշվետվության մեջ և ԿՊ-ում: Նախատեսվում է ուսումնասիրված միավորները բաժանել երկու խմբի՝

1. հուշարձաններ, որոնք կրում են ծրագրի իրականացման անմիջական ազդեցությունը
2. հուշարձաններ, որոնք չեն ազդվում ուղղակիորեն կամ ազդվում են անուղղակիորեն:

Բոլոր ազդվող հուշարձանների համար ծրագրի իրականացումից առաջ պետք է ներկայացվեն որոշակի եզրակացություններ, որոնք հնարավորություն կտան գնահատել նախագծի ազդեցությունը մշակութային միավորների և նրանց պատմա-աշխարհագրական միջավայրի վրա:

Ծրագրի իրականացման ազդեցության գոտում հայտնվող պատմա-մշակութային միավորների բացահայտման և տեղայնացման համար օգտվել ենք Հայաստանի Հանրապետության Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Վայոց Ձորի մարզ (ՀՀ կառավարության 30 դեկտեմբերի 2004 թվականի N 1929-Ն որոշման) փաստաթղթից :

ՀՀ	Տիպը	Համարանիշ	Հավելյալ նշումներ
1	Բնակատեղի	11.3/1	
2	Գերեզմանոց	11.3/2	գործող գերեզմանոցի հին հատվածն է
3	Դամբարանադաշտ	11.3/3	Վայք - Ջերմուկ ճանապարհի ձախ կողմում, կանգնեցված գետնին, պատվիրատու՝ Շապուհ

4	Խաչքար	11.3/4	Վայք - Ջերմուկ ճանապարհի ձախ կողմում, կանգնեցված գետնին, պատվիրատու Շապուհ
5	Խաչքար Ալամհատի	11.3/5	Վայքի ենթաշրջանի մուտքի մոտ, քաղաք մտնող ճանապարհի աջ կողմում
6	Խաչքար	11.3/6	Վայք տանող ճանապարհի աջ կողմում, ընկած գետնին, երկատված, վերին աջ քառորդը չի պահպանվել
7	Խաչքար	11.3/7	Վայքի ենթաշրջանի մուտքի մոտ, քաղաք մտնող ճանապարհի աջ կողմում, եղծված արձանագրությամբ
8	Կամուրջ. Պասկևիչի կամուրջը	11.3/8	Արփա գետի վրա վրնրգ. 1827 թ. Պասկևիչի կողմից

Դաշտային հետազոտությունները պետք է ուղղված լինեն երկու հիմանական նպատակների իրականացմանը.

1. Կազմելու այն հուշարձանների ամբողջական ցուցակը, որոնք ուղղակիորեն հայտնվում են ապագա հանքարդյունաբերական բնույթի աշխատանքների ազդեցության գոտում և գնահատել դրանց հասցվելիք վնասի աստիճանը կամ հաշվել ավերման ենթարկվելիք մակերեսները (այսպես կոչված հանքի շահագործման տարածքում ազդվող հուշարձանների բնորոշումը): Մշակել առաջարկություններ և լուծումներ մեղմացնելու կամ նվազագույնին հասցնելու մշակութային ժառանգության վրա նախատեսվող բացասական ազդեցությունը և փրկելու հուշարձանների գիտական ներուժը և պատմա-մշակութային արժեքը, հենվելով դաշտային աշխատանքների արդյունքում հավաքված տվյալների վրա (այլ

բառերով ասված՝ ստեղծելու արդյունավետ Հնագիտական Աշխատանքների Պլան, որում կարտացոլվեն այն իրական ռեսուրսներն ու ժամանակացույցը, որոնք անհրաժեշտ են հնագիտական ծրագրի կառավարման համար՝ պայմանով, որ դրանք չեն հետաձգի հանքարդյունաբերական աշխատանքների բուն գործընթացը):

2. Փաստագրելու և քարտեզագրելու այն հուշարձանները, որոնք մոտ են տեղակայված (50-1000 մ հեռավորության վրա) շինարարական աշխատանքների գոտուն և որոնք չեն ենթարկվում անմիջական ազդեցության, սակայն պահանջում են յուրահատուկ պահպանական միջոցառումներ: Այդ հուշարձանների սահմանների ճշգրտումը նպատակ ունի բացառել այն պոտենցիալ կամ հնարավոր վնասները, որոնք կարող են հասցվել հուշարձաններին այս աշխատանքների ընթացքում:

Հետազոտական աշխատանքների վերջին՝ եզրափակիչ փուլում դաշտային աշխատանքների արդյունքում փաստագրված ողջ տեղեկատվությունը պետք է մուտքագրվի GIS համակարգ, որտեղ՝ քարտեզների մեծ մասշտաբով խոշորացնելուց հետո (1:500 – 1:2500) հնարավորություն կընձեռնվի առանձնացնել անմիջապես ազդվող հուշարձանների ֆիզիկական սահմանները և գնահատել նրանց վրա շինարարական գործընթացի ազդեցության ծավալները մեծ ճշտությամբ: Փաստագրված ինֆորմացիայի ընդհանրացման արդյունքում ի հայտ կգան տարբեր տիպի հնագիտական հուշարձաններ, որոնք կարող են անմիջական ազդեցության ենթարկվել ապագա աշխատանքների ընթացքում և որոնց համար անհրաժեշտ է կիրառել հետազոտության և պեղման միմյանցից տարբեր մեթոդներ և ռազմավարություններ, որպիսիք կարող են լինել. ա) բնակատեղիներ, բ) ամրոցներ, գ) առանձին կառույցներ և որսորդական կայաններ, դ) աշտարակներ, ե) առանձին պատաշարեր և քայթ-որսադարաններ; զ) առանձին դամբարաններ և դամբարանների խմբեր կամ դամբարանադաշտեր, է) գերեզմանոցներ: Նախատեսվող գործունեության տարածքին հարակից շրջաններում պահպանված մշակութային արժեքների մնացորդները վերաբերվում են ճիշտ այդ ժամանակաշրջանին: Գյուղամիջի սուրբ Ստեփանոս եկեղեցու մուտքի

ճակատաքարի արձանագրությունից երևում է, որ եկեղեցին կառուցվել է Ազատեկի գյուղական հասարակության կողմից, Հակոբ Դ կաթողիկոսի ժամանակ, 17-րդ դարի 2-րդ կեսին և վերակառուցվել է Սալմաստից գաղթած հայերի կողմից 19-րդ դարի 30-ական թվականներին, լրացնելով քանդված ծածկը և պատերի վերին մասերը: Եկեղեցու պատերի և մույթերի մեջ օգտագործված են հին տապանաքարեր և խաչքարեր՝ արձանագրության մնացորդներով, որոնք բնորոշ են XIII-XIV դարերին:

Ըստ Ամադու-Նորավանքի մի արձանագրության տեղեկությունների՝ Սմբատ Օրբելյանն Ազատ գյուղն իր սահմաններով, շրջակա լեռներով ու դաշտերով նվիրել է Նորավանքին: Գյուղի արևմտյան եզրին տարածվում է հին գերեզմանոցը: Գերեզմանաքարերը գլխավորապես սալաքարերից են, մեծ մասամբ թաղված գետնի մեջ: Գերեզմանոցում կան երեք խաչքարեր, որոնք դրված են բնական ժայռաբեկորի վրա: Դրանց վրա քանդակված են երկու խաչեր՝ բնորոշ XIII-XIV դարերին, իսկ արված արձանագրություններն այժմ հողմնահարված են և անընթեռնելի:

Գյուղից երկու կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, ձորաբերանին գտնվում է Սուրբ Հակոբ ուխտատեղին, որի ներսում կա մի գերեզման: Համաձայն գերեզմանի տապանագրության՝ այն պատկանում է ոմն Հակոբի և թվագրված է 1607 թվականին: Ենթադրվում է, որ այդ պատճառով էլ նրա վրա կառուցված մատուռ-ուխտատեղին կոչվում է Սուրբ Հակոբ: Այս մատուռից մի քանի քայլ դեպի հարավ-արևելք, սարալանջին կան երեք գերեզմաններ և հարակից մի փոքր քանդակագարդ խաչքար, որն ըստ տվյալների՝ կանգնեցրել են Գրիգորը և իր կինն իրենց որդու՝ Հունան քահանայի գերեզմանի վրա 1222 թվականին:

Գյուղից դեպի հարավ-արևելք գտնվում է Սուրբ Վառվառա բերդ-ամրոցը, որը թվագրվում է ք.ա. առաջին հազարամյակին: Ամրոցն ունեցել է մեծապես պաշտպանական նշանակություն:

Ազատեկ գյուղի տարածքում կան շատ մատուռներ, իրենց XIII-XIV դարերին բնորոշ խաչքարերով, որոնցից պատմամշակութային արժեք են ներկայացնում Սուրբ Գևորգ և Սուրբ Շողակաթ մատուռները: Նշված մատուռները տեղի բնակչության շրջանում հայտնի են հիվանդություններ բուժելու հատկություններով:

Գյուղում պահպանվել են “Սմբատաբերդ” հին բերդի ավերակները, Սբ. Հակոբ եկեղեցին (գյուղից 2 կմ արևմուտք, 1623 թ.), սբ. Գևորգ (3 կմ հյուսիս-արևելք, X դար), սբ. Վառվառա (1,5 կմ հարավ), Սբ. Հովհաննես (2 կմ արևմուտք, XIX դ.), “Բառոժի” (3 կմ հյուսիս-արևմուտք), Շողակաթ (գյուղի արևելյան մասում, XIX դար) մատուռները, 13-14 դարերի խաչքարեր և Սբ. Ենոք սրբատեղին (X դար) :

Նախատեսվող գործունեության անմիջական տարածքում մշակութային հուշաձաններ չկան, որոնք կարող են անմիջական ազդեցություն կրել պլանավորվող գործունեությունից:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱԿԱՐԳԻՐԸ

Ստորև ներկայացվում են շրջակա միջավայրի բնական բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները:

Մթնոլորտային օդ. աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը և սարքավորումները դառնալու են վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Փոշու արտանետումներ կանխատեսվում են աշխատանքային հրապարակների շինարարության, ճանապարհների վերանորոգման և կառուցման, ինչպես նաև աշխատանքները սպասարկող ավտոտրանսպորտի տեղաշարժման ժամանակ: Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ: Նախնական հաշվարկներին համաձայն, տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի օքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Նախատեսվող գործունեության տարածքում իրականացված ելակետային տվյալները ձեռք են բերվել 2017 թվականին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում: Ուսումնասիրությունները իրականացվել են նախաձեռնող ընկերության աշխատակիցների ջանքերով:

Իրականացված ուսումնասիրությունները ուղված են եղել տարածքում ջերմոցային գազերի NO₂, SO₂ -ի չափումներին: Չափումներն իրականացվել են Ազատեկ և Հերիեր համայնքներում մեկ տարվա կտրվածքով: համեմատաբար չոր եղանակներին մարտ-հոկտեմբեր ամիսներին: Արդյունքները բերված են ստորև

2017	SO ₂ µg/m ³	NO ₂ µg/m ³
Հունվար	0.7	10.7
Փետրվար	1.0	7.8
Մարտ	0.9	6.2
Ապրիլ	0.3	1.2
Մայիս	0.5	6.3
Հունիս	0.3	1.3
Հուլիս	0.5	2.6
Օգոստոս	0.7	3.0
Սեպտեմբեր	0.8	2.9
Հոկտեմբեր	0.9	5.9
Նոյեմբեր	0.9	9.4
Դեկտեմբեր	0.9	10.4

Իրականացվել է նաև փոշու PM 2.5 և PM 10 մասնիկների չափումներ Ազատեկ և Հերիեր համայնքներում մեկ տարվա կտրվածքով համեմատաբար չոր եղանակներին մարտ-հոկտեմբեր ամիսներին: Արդյունքները բերված են ստորև

Փոշու մասնիկներ (Epm) PM 2.5					
Չափման կետ	Ամսաթիվ	սկիզբ	ավարտ	տևողություն	միջին ցուցանիշ μg/m3
տարածք	13/03/2017	03:22:17 AM	09:22:17 AM	06:00:00 AM	0.015
Հերիեր	22/03/2017	02:48:04 PM	10:22:17 AM	01:48:00 AM	0.026
Ազատեկ	29/03/2017	02:48:21 PM	11:22:17 AM	01:50:00 AM	0.009
Հերիեր	07/04/2017	12:17:30 AM	12:22:17 PM	01:00:00	0.021
Ազատեկ	21/04/2017	09:24:30 AM	01:22:17 PM	24:11:00	0.687
Հերիեր	02/06/2017	12:12:09 PM	02:22:17 PM	31:04:00	0.012
Ազատեկ	02/06/2017	12:08:42 PM	03:22:17 PM	31:04:00	0.010
Հերիեր	07/07/2017	02:41:54 PM	09:22:17 PM	39:00:00	0.014
Ազատեկ	07/07/2017	02:29:52 PM	10:22:17 PM	56:30:00	0.015
Հերիեր	02/08/2017	02:47:57 PM	11:22:17 PM	25:13:00	0.017
Ազատեկ	02/08/2017	01:47:03 PM	12:22:17 AM	40:00:00	0.018
Հերիեր	03/09/2017	10:31:52 AM	05:22:17 AM	25:35:00	0.015
Ազատեկ	03/09/2017	11:49:26 AM	06:22:17 AM	21:30:00	0.021
Փոշու մասնիկներ (Epm) PM 10					
Չափման կետ	Ամսաթիվ	սկիզբ	ավարտ	տևողություն	միջին ցուցանիշ μg/m3
Հերիեր	16/03/2017	08:05:26 AM	12:29:26 AM	04:24:00 AM	0.099
Ազատեկ	05/04/2017	09:19:36 AM	05:49:36 PM	08:30:00 AM	0.012
Հերիեր	06/04/2017	05:44:09 PM	02:44:09 AM	09:00:00 AM	0.009
Ազատեկ	09/06/2017	10:04:19 AM	03:26:19 PM	29:22:00	0.019
Հերիեր	09/06/2017	10:00:50 AM	03:22:50 PM	29:22:00	0.016
Ազատեկ	12/07/2017	02:47:57 PM	04:00:50 PM	25:13:00	0.017
Հերիեր	12/07/2017	02:31:57 PM	03:56:57 PM	25:25:00	0.013
Ազատեկ	05/08/2017	02:43:11 PM	03:13:00 AM	36:30:00	0.016
Հերիեր	05/08/2017	12:50:16 PM	01:50:16 PM	25:00:00	0.016
Ազատեկ	05/09/2017	09:51:59 AM	02:21:59 AM	16:30:00	0.018
Հերիեր	05/09/2017	09:37:19 AM	06:00:19 PM	32:23:00	0.014

Ջրային ավազան. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ջրային ավազանին հասցվող վնասը մոտ է զրոյականին :

Աշխատանքների ընթացքում կիրառվելու է հիմնական կոյուղատարով գուգարանախցիկ, ինչը թույլ է տալիս բացառել կենցաղային կոյուղաջրերի տարածքումը տարածքում:

Աշխատանքների կացությունը կազմակերպվելու է Վայք քաղաքում, յուրաքանչյուր օր անձնակազմը վերադառնալու է կացության վայր, որտեղ էլ կազմակերպվելու են բոլոր անհրաժեշտ սանիտարա-հիգիենիկ պայմանները:

Հողային ծածկույթ. Նախատեսվող գործունեության տարածքում հողային ծածկույթի վրա բացասական ազդեցություններ չեն նախատեսվում, քանզի տարածքը աղքատ է հողաբուսաշերտով, բոլոր դեպքերում հարթեցման աշխատանքների դեպքում ի հայտ եկաց հողաբուսաշերտը կառանձնացվի և առանձին կպահվի:

Նախատեսվող հիմնական հողային աշխատանքները իրենցից ներկայացնում են հարթեցման և տոփանման աշխատանքները :

Բուսական և կենդանական աշխարհ. Նախատեսվող գործունեության տարածքում աշխատանքների ընթացքում դրսևորվելու է որոշակի բացասական ազդեցություն տեղամասի բուսական ծածկույթի և կենդանական աշխարհի վրա: Ազդեցությունը իրականում չնչին է լինելու, քանի որ տարածքը շատ փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքը աղքատ է բուսական աշխարհով և այժի են ընկնում որոշ տափաստանային թփատեսակներ:

Աղտոտում թափոններով. Աշխատանքների ժամանակ առաջացող թափոններն են օգտագործված, բանեցված քսայուղերը, նավթամթերքի մնացորդները, կենցաղային թափոնները: Ստորև ներկայացվում է առաջացող թափոնների բնութագիրը:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը:

Հնարավոր արտահոսքերից խուսափելու համար բոլոր տեսակի յուղերը և քսայուղերը (կոմպրեսորային յուղ, արդյունաբերական յուղ և այլն) պահպանվելու են +110 % տարողությամբ տակդիրների վրա, միաժամանակ կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք արտահոսքերի ժամանակ արագ ներծծում են յուղային զանգվածը:

Բնապահպանական կառավարման պլան

Գործունեության տեղամասը, փուլը կամ իրականացվող աշխատանքը	Ազդակիր բաղադրիչը /ընկալիչը	Նախատեսված մեղմող միջոցառումը	Իրականացման պատասխանատուն	Վերահսկող մարմինը
Տարածքի նախապատրաստական աշխատանքներ	Էրոզիայի երևույթներ	-Աշխատանքների համար օգտագործել գոյություն ունեցող ճանապարհները -Շինհրապարակները կառուցել արտադրական հարթակների վրա	«ԷՏ Սոլար» ՍՊԸ, շինարարական կապալառուներ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
Շինարարության փուլ հողային աշխատանքներ, շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործում	Հողածածկ, բուսականություն	Բացառել ճանապարհից դուրս մեքենաների և մեխանիզմների երթևեկությունը	«ԷՏ Սոլար» ՍՊԸ, շինարարական կապալառուներ	Վայքի քաղաքապետարան
		Աշխատանքների արդյունքում առաջացած մետաղի ջարդոնը (երկաթ, պողպատ, պղինձ և այլն) և այլ անվտանգ թափոնները (փայթ, թուղթ և այլն) պետք է վերաօգտագործվի կամ վերամշակման համար վաճառել լիցենզավորված կազմակերպություններին	«ԷՏ Սոլար» ՍՊԸ, շինարարական կապալառուներ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

Շինարարության փուլ՝ հողային աշխատանքներ, շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործում,	Օդային ավազան	Նյութերի փոխադրման ընթացքում բեռնատարների թափքի ծածկում	«ԷՏ Սոլար» ՍՊԸ, շինարարական կապալառուներ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
		Նյութերի պատշաճ պահեստավորում և կառավարում՝ փոշու մակարդակը սահմանափակելու նպատակով (օրինակ՝ անջրանցիկ բրեզենտով ցեմենտի պաշտպանում)		
		Տեղում շինարարության նյութերի/թափոնների բաց այրման արգելում		

<p>Շինարարական և հետագա շահագործական աշխատանքներ</p>	<p>Աշխատողների առողջության և անվտանգության ապահովման պայմաններ</p>	<p>Բանվորների ուսուցում սարքավորումների անվտանգության, տրանսպորտային անվտանգության, վտանգավոր նյութերի հետ վարվելու, առաջին օգնության և փրկարարական տեխնիկաների կիրառման, արտակարգ իրավիճակներին արձագանքման</p>	<p>«ԷՏ Սոլար» ՍՊԸ, շինարարական կապալառուներ</p>	<p>ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին <i>ՀՀ ԱԲՆ Պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն</i></p>
		<p>Ծրագրի տարածքում և բոլոր մեքենաներում առաջին օգնության հավաքածուների և կրակմարիչների ապահովում</p>		
		<p>Պատահարների դեպքում տուժած աշխատակիցների փոխադրման ապահովում</p>		
		<p>Բոլոր պատահարների և միջադեպերի գրանցում և հաշվետվողականություն</p>		

Շինարարական և հետագա շահագործական աշխատանքներ , հանրային ճանապարհներ	Շրջակա բնակավայրերի բնակիչների առողջության, անվտանգության և սոցիալական պայմանները	Աշխատատեղերի լրացման ժամանակ առաջնահերթություն տալ տեղի բնակիչների	Շինարարական և հետագա շահագործական աշխատանքներ	Վայոց Ձորի մարզպետարան, Վայքի համայնքապետարան
		Բեռնատեղափոխումների կառավարման օպտիմալացում բեռնատարների ավելորդ երթևեկությունից խուսափելու նպատակով		
		Հանրային ճանապարհներով բեռնատարների շարժի թույլատրում միայն ցերեկային ժամերին		
		Մեքենաների արագության նվազեցում (առաջարկվող արագության սահմանափակումների պահպանում) բնակելի տարածքներում		
		Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շինարարական տեխնիկայի և այլ մեքենաների պարբերական տեխնիկական սպասարկում		

		Առնվազն 24 ժամ առաջ մոտակա տարածքների բնակիչներին և կազմակերպություններին ծանուցել նախատեսվող հատկապես աղմկոտ միջոցառումների իրականացման վերաբերյալ	
		Հանրային ճանապարհներով շարժվող մեքենաների չափի կամ քաշի սահմանափակումներ	
		Մասնկացություն Կապան համայնքի սոցիալական ծրագրերին	

Բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլան

Նախատեսվող գործունեությունը տարբեր ազդեցություններ կարող է ունենալ բնապահպանական և սոցիալական բաղադրիչների վրա: Ստորև ներկայացված են որոշ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան նախատեսվող գործունեության իրականացման և շահագործման արդյունքում մինիմալի հասցնել Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները և Սոցիալական բացասական ազդեցությունները՝

1. Նախագիծը պետք է մշակվի այնպես, որ նվազագույնի հասցվի հողի ձեռքբերման անհրաժեշտությունը և վերաբնակեցումը:
Այս խնդիրը նախատեսվող գործունեության իրականացման դեպքում արդի չէ, քանի որ նախատեսվող գործունեության տարածքում վերաբնակեցման առնչվող խնդիրներ չկան: Տարածքը չի հանդիսանում նաև արոտավայր, ուստի սոցիալական վնասակար ազդեցությունը մինիմալիզացված է:
2. Պետք է նվազագույնի հասցվի նախատեսվող գործունեության տարածքին մոտեցող ճանապարհների կառուցման անհրաժեշտությունը:
3. Հողի բերրի շերտի հանում և պահում
Հողի բերրի շերտի նվազագույնն է այդ տարածքում, բայց ամեն դեպքում կարևորելով հողի բերրի շերտի հանման և պահպանման միջոցառումները, հողի բերրի շերտի ամենաչնչին հատվածն, որը հնարավոր կլինի հանել և կուտակել, կհանվի և կկուտակվի հետագայում տարածքի բնապահպանական կայունության հավասարակշռման միջոցառումների իրականացման նպատակով:
4. Աշխատանքների ավարտից հետո օժանդակ այն բոլոր հատվածներում, որտեղ տեղակայված կլինեն աշխատակիցների ժամանակավոր տեղակայման վայրերը, կապամոնտաժվեն և կվերականգնվեն:
5. Հողի և ջրի աղտոտումից կարելի է խուսափել մեքենաների լվացումը, լցավորումը և այլ ծառայությունների մատուցումը կազմակերպելով համապատասխան սպասարկման կենտրոններում:
6. Շինարարության և շահագործական փուլերում նախատեսվող գործունեությունից առաջացած կենցաղային աղբի հեռացումը կկազմակերպվի համայնքային կոմունալ ծառայություններ մատուցողների միջոցով:
7. Շինարարության և շահագործական փուլերում նախատեսվող գործունեությունից առաջացած մետաղի ջարդոնը կարելի է վաճառել դրա վերամշակմամբ զբաղվող հատուկ ընկերություններին (օրինակ՝ Մետեքսիմ ՍՊԸ), որոնք ջարդոններն անմիջապես կտեղափոխեն համապատասխան վերամշակման վայր:
8. Չնայած, որ նախատեսվող գործունեության հարևանությամբ չկան բնակելի տներ, այնուամենայնիվ անհրաժեշտ բոլոր միջոցառումները կիրականացվեն, որպեսզի բնակիչների համար աղմուկի մակարդակը չգերազանցի 55 դԲ (A): Եթե աղմուկի մակարդակը կգերազանցի 80 դԲ (A) աշխատողները պետք է կրեն լսողությունը պաշտպանող միջոցներ: Շինարարության ընթացքում առաջացած աղմուկից պատճառվող անհանգստությունը պետք է նվազեցվի տարբեր միջոցառումներով

(օրինակ բեռնատարները պետք է աշխատեն միայն ցերեկային ժամերին, կամ պետք է օգտագործել միայն ցածր ձայն ունեցող սարքավորումներ և այլն:

9. Մշակութային հուշարձանների անխաթարությունն ապահովելու համար կիրառվելու ՊԱՏԱՀԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐԻ ընթացակարգը՝ շինարարության ընթացքում, իսկ բացահայտված հուշարձանները կցանկապատվեն և կսահմանվի հատուկ պահպանման գոտի՝ շահագործման վուլում:
10. Կենդանական և բուսական աշխարհի նոր ներկայացուցիչ ի հայտ գալու դեպքում, պետք է կիրառվի պատահական գտածոյի ընթացակարգ՝
 - Այդ տարածքում դադարեցվի ցանկացած աշխատանք
 - Դիմել մասնագետի տարածքում ուսումնասիրություն կատարելու և ըստ եզրակացության աշխատանքները շարունակելու համար
11. Բողոքների բավարարման մեխանիզմը հետևյալն է կապվել կապալառուի բողոքներով զբաղվող աշխատողների հետ, պարբերաբար տեղանքի այցի ժամանակ, կամ հեռախոսի միջոցով, կարող են դիմել համայնքի ղեկավարին կամ ներգրավված հասարակական կազմակերպություններին: Ներկայացնել բողոքը և տեղեկություն տրամադրել գործի վերաբերյալ Համաձայնության գալ կապալառուի հետ մեղմման միջոցառումների վերաբերյալ, կամ համաձայնության գալ բողոքի բավարարման ժամկետների վերաբերյալ (բողոքը պետք է բավարարվի երկու շաբաթվա ընթացքում, եթե, ոչ, ապա հետագա քայլերը նշված կլինեն նախատեսվող համաձայնագրի մեջ):
12. Տարածքի նախապատրաստական աշխատանքների ժամանակ հնարավոր հավաքված հողի բերրի շերտի պահպանման համար նախատեսված է հետևյալ միջոցառումները
 - Հողի բերրի շերտի նույնիսկ չնչին հատվածի առանձնեցում և պահում առանձնացված հարթակում
 - Ապահովել հողի բերի շերտի պահեստարանի մեկուսացումը տեղումներից սնվող հեղեղահոսքերից
 - Հողի բերրի շերտի ձևավորված կույտը կուլտիվացնել տարածքին բնորոշ և ոչ ինվազիվ տեսակ հանդիսացող բուսատեսակով

Քանի որ տարածքում հողի բուսաշերտի ծավալները բացակայում են (կամ աննշան են) ուստի դժվար է կանխատեսել հավանական առաջացող բուսաշերտի ծավալները: Բոլոր դեպքերում առաջացող բուսաշերտը կուտակվելուց և ժամանակավոր պահպանվելուց հետո կօգտագործվի շինարարական աշխատանքների ընթացքում բացված նոր դաշտամիջյան ճանապարհների վերականգնման համար:

Բնակչության սոցիալական պայմանների բարելավման դրույթներ

Վերլուծելով նախատեսվող աշխատանքների ծավալները և բնույթը՝ կարելի է ասել, որ նախատեսվող աշխատանքների ընթացքում առաջացող ազդեցության աստիճանը հարակից համայնքի բնակչության վրա միջինից ցածր է սպասվում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվող բոլոր հողային աշխատանքները, շինհրապարակների կառուցումը կիրականացվի բնակելի տարածքներից հեռու: Ելնելով այս հանգամանքներից՝ վերաբնակեցման կամ բնակչության տարհանման անհրաժեշտություն չի կարող առաջանալ:

Բնակչության կենսամակարդակի բարելավման դրույթներ

Ընկերությունը նախատեսում է իրականացնել սոցիալական ծրագրեր և մասնակցել ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումների իրականացմանը: Մասնակցությունը կիրականացվի տարբեր եղանակներով: Հետագա գնահատման հաշվետվությունում ավելի մանրամասն կներկայացվի ընկերության սոցիալական ծրագրերի կառավարման պլանը

Ընկերության կողմից հատուկ նշանակված անձը մշտական կապ կպահպանի համայնքնապետարանների հետ, կծանոթանա յուրաքանչյուր համայնքի քննարկվող և նախատեսվող ծրագրերին: Ընդհանուր հետաքրքրություն ներկայացվող ծրագրերի դեպքում ընկերությունը կմասնակցի դրանց իրականացմանը համաֆինանսավորման ձևով: Ընկերության կազմում կաշխատեն համայնքների բնակիչներ, որոնց եկամուտը կառաջանա ընկերության գործունեության հաշվին և կնպաստի աշխատողների և նրանց ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանը: Նախատեսվում է, որ նախատեսվող գործունեության արդյունքում շուրջ 10 նոր աշխատատեղ կբացվի շահագործման, իսկ շինարարության փուլում շուրջ 50 աշխատատեղ:

Մշտադիտարկումների պլան

Նախատեսվող գործունեության իրականացման և հետագա շահագործման ընթացքում հիմնական մշտադիտարկումները կապված կլինեն մթնոլորտային օդի, պահովող հողի բերրի շերտի և վիզուալ մոնիթորինգի հետ: Նախատեսվող գործունեության իրականացման

շինարարական աշխատանքների ծամանակ հնարավոր է որոշակի ազդեցություն մթնոլորտ արտանետվո փոշու և գազերի տեսքով: Հետագա շահագործման ընթացքում նախատեսվող գործունեությունից շրջակա միջավայր արտանետումներ չեն լինելու: Հիմնական մշտադիտարկումները կիրականացվեն շինարարական աշխատանքների ժամանակ:

1. Ջերմոցային գազերի մշտադիտարկումներ- շաբաթեկան 1 անգամ
2. Փոշու մասնիկների մշտադիտարկումներ- շաբաթեկան 1 անգամ
3. Հողի բերրի շտի պահպանման և կուտակման ընթացիկ մշտադիտարկումներ

Մշտադիտարկումները իրականացվելու են նախաձեռնողի կողմից ներգրավված սարքավորումների միջոցով, որոշ դեպքերում կներգրավվեն սերտիֆիկացված լաբորատորիաներ: Նախաձեռնողի կողմից համապատասխան որոկավորում ունեցող անձը կիրականացնի նախատեսվող մշտադիտարկումները: Ծախսերը կկազմեն ամսեկան 250 000 հհ դրամ:

Թափոնների կառավարում

Նախատեսվող գործունեության նախապատրաստական և շահագործական փուլերում առաջացող թափոնատեսակները մեծածավալ չեն, քանի որ ինքնին գործունեության տեսակը թափոն արտադրող չէ: Թափոնների առաջացումը կարող է նվազեցվել, եթե կապալառուն իրականացնի թափոնների ճիշտ կառավարում: Քիչ քանակությամբ վտանգավոր թափոններ, ինչպիսիք են մնացորդային յուղը, օգտագործված դողածածկանները, ընդհանուր շինարարական աղբը կպահվեն ֆոտովոլտային կայանի տարածքում՝ վտանգավոր թափոնների համար նախատեսված բետոնապատ, ծածկված տարածքում:

Թափոնների տեղամասի սահմանագծումը

Տեղամասը և հարակից տարածքը պետք է ցանկապատվի: Ցանկապատումը պետք է իրականացվի այն կերպ, որպեսզի չխոչընդոտի արտահոսքերի վերացմանն ուղղված գործողություններին: Ոչ աշխատանքային և գիշերային ժամերին պետք է ապահովվեն անվտանգության լրացուցիչ միջոցառումներ, ինչպիսիք են պահակային վերահսկում, Տեղամասի պարագծով պատշաճ լուսավորություն և այլն: Գործունեության ընթացքում առաջացող խետանված պանելները կպահվեն թափոնների պահման տեղամասում, որից հետո կհանձնվեն լիցենզավորված կազմակերպությանը: Դրանց տեղափոծումն և կառավարումը կիրականացնի լիցենզավորված կազմակերպությունը:

Տեղամասի մուտքը/ ելքը

Ընդհանուր անվտանգության տեսանկյունից Տեղամասի մուտքերի/ելքերի քանակը պետք է հնարավորինս սահմանափակ լինի և չխոչընդոտի դրա արդյունավետ շահագործումը: Այդ տեսանկյունից մուտքերի/ելքերի նպատակահարմար քանակը երկուսն է, սակայն արտակարգ իրավիճակներում գործողությունների արդյունավետության պահանջներից ելնելով կարող են պահանջվել լրացուցիչ մուտքեր/ելքեր, որոնք թույլ կտան հատուկ նշանակության ավտոմեքենաներին մուտք գործել և տեղաշարժվել տարբեր ուղղություններով:

առաջացող թափոնների վտանգավորության դասերը, ծածկագրերը և տարեկան քանակությունները

№	Անվանումը	Ճածկագիրը ըստ "Թափոնների ցանկի"	Վտանգավորու- թյան դասը	Չանգվածը, տ/տարի
1	Բանեցված արդյունաբերական յուղեր	54100205 02 03 3	III	0.15
2	Բանեցված դողածածկաններ	57500202 13 00 4	IV	0.35
3	Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	54100211 02 03 3	III	0.12
4	Բանեցված կոմպրեսորային յուղեր	54100211 02 03 3	III	0.25
5	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	91200400 01 00 4	IV	1.2

Ներկայացված թափոնատեսակները հավաքվելու և պահեստավորվելու են գործունեության տարածքում, ինչպես նշվեց առանանձնեցված հատվածում, որից հետո հանձնվելու են լիցենզավորված կազմակերպությանը կառավարման համար:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների նվազագույն անհրաժեշտ քանակի պահեստավորում անթափանց տակառներով աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում: Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու համապատասխան ծառայություն մատուցող կայանում:
- Շինարարական աշխատանքների և շահագործման փուլի հետ կապված օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար: Այդ աշխատանքները կատարվելու են մասնագիտացված ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Երկրորդային վերամշակումն իրականացնող ընկերությունը:
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնվում որպես մետաղական ջարդոն վերամշակող ընկերությանը՝ պայմանագրային հիմունքներով:
- Մեքենաների, կտրման հաստոցի, այլ սարքավորումների շահագործում տեխնիկական սարքին վիճակում:
- Առաջացող թափոնների (օգտագործված դիզելային և բենզինային շարժիչների յուղեր և քսուկներ) անվտանգ կառավարում: Օգտագործված յուղերը նախատեսվում է կուտակել մետաղյա տարողություններում (տակառներ), այնուհետև ավտոտրանսպորտով տեղափոխվում, ուր նախատեսվում է դրանք վաճառել օգտագործված յուղերի վերամշակմամբ զբաղվող ընկերություններին:

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն : Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Նախատեսվող գործունեության տարածքը բավական հեռու է բնակելի հատվածներից ինչը հնարավորություն է տալիս գործունեության ազդեցությունը մինիմալացնել: Փոշու կանխարգելման համար կիրականացվեն ջրցանման գործողությունների իսկ աղմուկի և վիբրացիայի ազդեցությունը աննշան է լինելու քանզի բավական մեծ բուֆերային հեռավորություն կա: Միաժամանակ կիրականացվեն մշտադիտարկումներ, որոնք փույլ կտան կառավարել գործունեության հետ կապված ազդեցությունները:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներառում են.

- Հայտնաբերման դեպքում նախատեսվող աշխատանքների տեղամասերը տեղափոխում՝ բացառելու համար ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի ու կենդանիների վրա բացասական ազդեցությունը:
- Հնարավորինս քիչ հողաբուսական շերտի հեռացում աշխատանքներ իրականացնելիս:
- Նախատեսվող հորատահրապարակներում և ճանապարհներում թփերի առկայության դեպքում դրանց դիրքի տեղաշարժում (թույլատրելի սահմաններում), հակառակ դեպքում դրանց վերատնկում համապատասխան մարմնի հետ համաձայնեցված:
- Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից դուրս, հատկապես երբ խոտածածկը թաց է:
- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:

- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում դադարեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:
- Ամբողջ աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:
- Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:

Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը շինարարական աշխատանքների ընթացքում:

